

**Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի թիվ 392/2009  
կանոնակարգ (ԵՀ)**

**Դժբախտ պատահարների դեպքում՝ ծովային ուղեւորափոխադրումներ իրականացնող  
անձանց պատասխանատվության մասին**

**Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ**

*Պաշտոնական տեղեկագիր, L 131, 28.05.2009թ., էջեր 0024 – 0046*

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ,  
մասնավորապես, դրա 80(2) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի  
եզրակացությունը [1],

հաշվի առնելով Տարածաշրջանների հարցերով կոմիտեի եզրակացությունը [2],

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին  
համապատասխան [3] եւ ելնելով Հաշտեցման կոմիտեի կողմից 2009 թվականի փետրվարի  
3-ին հաստատված համատեղ տեքստից,

Քանի որ

1) ընդհանուր տրանսպորտային քաղաքականության շրջանակներում պետք է ձեռնարկվեն  
միջոցներ՝ ծովային տրանսպորտի անվտանգությունը մեծացնելու համար: Այդ միջոցները  
պետք է ներառեն ուղեւորներին պատճառված վնասի համար պատասխանատվության  
նորմեր, քանի որ կարելի է ծովային պատահարներից տուժած ուղեւորներին տալ պատշաճ  
մակարդակի փոխհատուցում,

2) ուղեւորների եւ նրանց ուղեբեռի ծովային փոխադրումների վերաբերյալ Աթենքի 1974  
թվականի կոնվենցիային կից 2002 թվականի արձանագրությունն ընդունվել է 2002  
թվականի նոյեմբերի 1-ին Ծովային միջազգային կազմակերպության հովանու ներքո (ԾՄԿ):  
Համայնքը եւ դրա անդամ պետությունները շարունակում են որոշել՝ արդյոք պետք է  
միանան կամ վավերացնեն այդ արձանագրությունը: Ամեն դեպքում, սույն Կանոնակարգով

ինկորպորացված դրա դրույթները Համայնքի համար պետք է կիրառվեն 2012 թվականի դեկտեմբերի 31-ից ոչ ուշ,

3) ուղեւորների եւ նրանց ուղեբեռի ծովային փոխադրումների վերաբերյալ Աթենքի 1974 թվականի կոնվենցիան՝ փոփոխված 2002 թվականի արձանագրությամբ (Աթենքի կոնվենցիա), կիրառվում է միայն միջազգային փոխադրումների նկատմամբ:

Ազգային եւ միջազգային փոխադրումների միջեւ տարբերակումը ներքին շուկայում վերացվել է ծովային փոխադրման ծառայությունների մասով, ուստի եւ Համայնքի ներսում միջազգային ու ազգային փոխադրումների դեպքում նպատակահարմար է միեւնույն մակարդակի ու բնույթի պատասխանատվություն ունենալ,

4) Աթենքի կոնվենցիայով պահանջվող երաշխիքների իրականացման ժամանակ հաշվի են առնվում նավի սեփականատիրոջ ու ապահովագրական ընկերությունների ֆինանսական միջոցները: Նավերի սեփականատերերը պետք է ունենան այնպիսի դիրք, որպեսզի կարողանան կառավարել իրենց երաշխիքները տնտեսապես ընդունելի եղանակով, իսկ հատկապես ազգային փոխադրման ծառայություններ իրականացնող՝ նավագնացության փոքր ընկերությունների դեպքում պետք է հաշվի առնվեն դրանց գործողությունների սեզոնային բնույթը: Հետեաբար, սույն Կանոնակարգի համաձայն երաշխիքներ սահմանելիս պետք է հաշվի առնվեն նավի տարբեր դասերը,

5) անհրաժեշտ է պարտավորեցնել փոխադրողին կանխավճար կատարել ուղեւորի մահվան կամ վերջինիս հասցված անձնական վնասի դեպքում, որի վճարումը չի համարվում պատասխանատվության ընդունում,

6) ուղեւորներին վերապահված իրավունքների մասին անհրաժեշտ տեղեկություններ պետք է տրամադրվեն այդ ուղեւորներին նախքան նրանց ուղեւորությունը, իսկ դրա անհնարինության դեպքում, ամենաուշը՝ մեկնման ժամանակ,

7) ԾՄԿ-ի իրավական հարցերով կոմիտեն 2006 թվականի հոկտեմբերի 19-ին ընդունել է Աթենքի կոնվենցիայի իրականացմանն առնչվող ԾՄԿ-ի վերապահում եւ ուղեցույցներ (ԾՄԿ ուղեցույցներ)՝ Աթենքի կոնվենցիայի համաձայն որոշակի խնդիրների անդրադառնալու համար, ինչպիսին է, մասնավորապես, ահաբեկչության հետ կապված վնասի դեմ փոխհատուցումը: Որպես այդպիսին՝ ԾՄԿ-ի ուղեցույցները կարող են համարվել հատուկ օրենք,

8) սույն Կանոնակարգով ինկորպորացվում եւ պարտադիր են դառնում ԾՄԿ-ի ուղեցույցների որոշ մասեր: Այդ նպատակով, եթե այդպիսիք տեղ են գտել ԾՄԿ-ի ուղեցույցների դրույթներում, սահմանվող պահանջը պետք է հասկացվի որպես պարտադիր դրույթ,

9) Աթենքի կոնվենցիայի (I հավելված) եւ ԾՄԿ-ի ուղեցույցների (II հավելված) դրույթները պետք է որոշակի փոփոխություններով հասկացվեն Համայնքի օրենսդրության համատեքստում,

10) սույն Կանոնակարգով նախատեսված պատասխանատվության համակարգը պետք է քայլ առ քայլ ընդարձակվի՝ ներառելով նավերի տարբեր դասեր, ինչպես սահմանված է «Ուղեւորատար նավերում անվտանգության կանոնների ու ստանդարտների մասին» Խորհրդի 1998 թվականի մարտի 17-ի 98/18/ԵՀ հրահանգի 4-րդ հոդվածով [4]: Հաշվի պետք է առնվեն պահանջված մակարդակի մատչելի ապահովագրական ծածկույթի ձեռք բերման վճարների համար հետեսանքները եւ շուկայի հնարավորությունը ուղեւորների իրավունքների ամրապնդման քաղաքականության նախադրյալների եւ երթուղիների որոշ մասերի սեզոնային բնույթի համեմատ,

11) Աթենքի կոնվենցիայի 17-րդ եւ 17bis հոդվածներով կարգավորվող հարցերը պատկանում են Համայնքի բացառիկ իրավասությանը՝ այնքանով, որքանով այդ հոդվածները շոշափում են «Քաղաքացիական եւ առետրային գործերով վճիռների ճանաչման ու կատարման մասին» Խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 44/2001 (ԵՀ) կանոնակարգով սահմանված նորմերը [5]: Այդ չափով այդ երկու դրույթները Համայնքի իրավակարգի մաս կկազմեն, երբ Համայնքը միանում է Աթենքի կոնվենցիային,

12) սույն Կանոնակարգի նպատակներից ելնելով՝ պետք է համարվի, որ «կամ գրանցված է անդամ պետությունում» արտահայտությունը նշանակում է, որ լաստանավի վարձակալման համար գրանցման նպատակներով դրոշի պետությունը անդամ պետություն է կամ Աթենքի կոնվենցիայի պայմանավորվող կողմ: Անդամ պետությունները եւ Հանձնաժողովը պետք է ձեռնարկեն անհրաժեշտ քայլեր՝ հրավիրելու ԾՄԿ-ն մշակելու ուղեցույցներ՝ լաստանավի վարձակալման համար գրանցման հասկացության վերաբերյալ,

13) սույն Կանոնակարգի նպատակներից ելնելով՝ պետք է համարվի, որ «շարժունակություն ապահովող սարքավորումներ» արտահայտությունը չի նշանակում ո՛չ ուղեբեռ, ո՛չ փոխադրամիջոցներ՝ Աթենքի կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով,

14) սույն Կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցները պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգերը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը համապատասխան [6],

15) մասնավորապես, Հանձնաժողովը պետք է ունենա սույն Կանոնակարգում փոփոխություններ կատարելու իրավասություն՝ դրան առնչվող միջազգային կոնվենցիաներին, արձանագրություններին, օրենսգրքերին եւ բանաձեւերին համապատասխան հետագա փոփոխություններ ինկորպորացնելու համար: Քանի որ այդ ակտերն ընդհանուր բնույթ են կրում եւ նախատեսված են սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու, այդ թվում՝ այն նոր, ոչ էական տարրերով լրացնելու համար, ապա դրանք պետք է ընդունվեն 1999/468/ԵՀ որոշման 5ա հոդվածով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգի համաձայն,

16) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1406/2002 կանոնակարգով (ԵՀ) [7] հիմնված Եվրոպական ծովային անվտանգության գործակալությունը (ԵԾԱԳ) պետք է աջակցի Հանձնաժողովին՝ սույն Կանոնակարգով սահմանված նորմերի կիրառման մասին ընթացիկ զեկույց նախապատրաստելու եւ մշակելու հարցում,

17) ազգային մարմինները, մասնավորապես նավահանգստի ղեկավարները, հիմնարար ու կենսական դեր են խաղում ծովում անվտանգությանն առնչվող տարբեր վտանգները բացահայտելու եւ կառավարելու հարցում,

18) անդամ պետությունները «Ծովային անվտանգության մասին» 2008 թվականի հոկտեմբերի 9-ի իրենց հայտարարության մեջ պարտավորվել են ոչ ուշ, քան մինչեւ 2012 թվականի հունվարի 1-ը, համաձայնություն տալ առաջնորդվելու «Ծովային բնույթի հայցերի համար պատասխանատվության սահմանափակման մասին» 1976 թվականի միջազգային կոնվենցիայով, որը փոփոխվել է 1996 թվականի արձանագրությամբ:

Անդամ պետությունները կարող են օգտագործել ուղեւորների նկատմամբ կիրառվող պատասխանատվության սահմանափակման համակարգը սույն Կանոնակարգի հատուկ դրույթների միջոցով կարգավորելու՝ այդ Կոնվենցիայի 15(3bis) հոդվածով նախատեսված այլընտրանքային իրավունքը,

19) քանի որ սույն Կանոնակարգի նպատակը, այն է՝ ծովային փոխադրումներ իրականացնողների եւ նրանց ուղեւորների իրավունքները կարգավորող միասնական կանոնների ստեղծումը, չի կարող բավարար չափով իրականացվել առանձին անդամ

պետությունների կողմից եւ, հետեւաբար, գործողության ծավալի եւ ազդեցության նկատառումներով, կարող է առավել լավ իրականացվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է միջոցներ ընդունել՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքին համապատասխան: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Կանոնակարգով չի նախատեսվում ավելին, քան անհրաժեշտ է՝ նշված նպատակին հասնելու համար,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

### *Հոդված 1*

#### **Կարգավորման առարկան**

1. Սույն Կանոնակարգով սահմանվում է Համայնքի ռեժիմը՝ կապված ծովային ուղեւորափոխադրումների համար պատասխանատվության ու ապահովագրության հետ, ինչպես սահմանված է հետեւյալ ակտերի համապատասխան դրույթներով՝

ա) «Ուղեւորների եւ նրանց ուղեբեռի ծովային փոխադրումների վերաբերյալ» Աթենքի 1974 թվականի կոնվենցիան՝ փոփոխված 2002 թվականի արձանագրությամբ (Աթենքի կոնվենցիա), ինչպես սահմանված է I հավելվածում, եւ

բ) Աթենքի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ԾՄԿ-ի վերապահումը եւ ուղեցույցները՝ ընդունված ԾՄԿ-ի իրավական հարցերով կոմիտեի կողմից 2006 թվականի հոկտեմբերի 19-ին, ինչպես սահմանված է II հավելվածով:

2. Ավելին, սույն Կանոնակարգով այդ դրույթների կիրառությունն ընդլայնվում է՝ տարածվելով մեկ անդամ պետության տարածքում Ա եւ Բ դասերի նավերով ծովային ուղեւորափոխադրումների վրա՝ համաձայն 98/18/ԵՀ հրահանգի 4-րդ հոդվածի, ինչպես նաեւ սահմանվում են որոշակի լրացուցիչ պահանջներ:

3. Հանձնաժողովը, ոչ ուշ, քան մինչեւ 2013 թվականի հունիսի 30-ը, անհրաժեշտության դեպքում, ներկայացնում է օրենսդրական առաջարկ, որպեսզի ընդլայնի սույն Կանոնակարգի գործողության շրջանակը՝ տարածելով այն Գ եւ Դ դասերի նավերի վրա՝ համաձայն 98/18/ԵՀ հրահանգի 4-րդ հոդվածի:

## Հոդված 2

### **Գործողության ոլորտը**

Սույն Կանոնակարգը կիրառվում է ցանկացած միջազգային փոխադրման նկատմամբ՝ Աթենքի կոնվենցիայի 1-ին հոդվածի 9-րդ կետի իմաստով եւ Ա ու Բ դասերի նավերով մեկ անդամ պետության տարածքում ծովային փոխադրումների նկատմամբ՝ համաձայն 98/18/ԵՀ հրահանգի 4-րդ հոդվածի, եթե՝

ա) նավը նավարկում է անդամ պետության դրոշի ներքո կամ գրանցված է անդամ պետությունում,

բ) փոխադրումների մասին պայմանագիրը կնքվել է անդամ պետությունում, կամ

գ) մեկնման վայրը կամ նշանակման վայրը, փոխադրումների մասին պայմանագրին համապատասխան, գտնվում է անդամ պետությունում:

Անդամ պետությունները կարող են կիրառել սույն Կանոնակարգը բոլոր ներքին ծովային ուղեւորությունների դեպքում:

## Հոդված 3

### **Պատասխանատվությունը եւ ապահովագրությունը**

1. Ուղեւորների, նրանց ուղեբեռի եւ փոխադրամիջոցների նկատմամբ պատասխանատվության ռեժիմը եւ ապահովագրության կամ ֆինանսական ապահովագրության այլ միջոցների մասին կանոնները կարգավորվում են սույն Կանոնակարգով, I հավելվածում նշված Աթենքի կոնվենցիայի 1 եւ 1bis հոդվածներով, 2(2) հոդվածով, 3-16-րդ հոդվածներով եւ 18-րդ, 20-րդ ու 21-րդ հոդվածներով եւ II հավելվածում նշված ԾՄԿ-ի ուղեցույցների դրույթներով:

2. II հավելվածում նշված ԾՄԿ ուղեցույցները պարտադիր են:

#### Հոդված 4

##### **Շարժունակություն ապահովող սարքավորումների կամ այլ հատուկ սարքերի համար փոխհատուցումը**

Տեղաշարժման սահմանափակ հնարավորություն ունեցող ուղեւորի կողմից օգտագործվող շարժունակություն ապահովող սարքավորումների կամ հատուկ այլ սարքերի կորստի կամ վնասման դեպքում փոխադրողի պատասխանատվության հարցը կարգավորվում է Աթենքի կոնվենցիայի 3(3) հոդվածով: Փոխհատուցվող գումարի չափը պետք է համապատասխանի տվյալ սարքավորումը փոխելու համար անհրաժեշտ գումարի չափին կամ, կիրառելիության դեպքում, դրա վերանորոգման համար պահանջվող ծախսերի չափին:

#### Հոդված 5

##### **Պատասխանատվության ընդհանուր սահմանափակումը**

1. Սույն Կանոնակարգով չեն փոփոխվում փոխադրողի կամ փոխադրում իրականացնողի իրավունքները՝ սահմանված «Ծովային բնույթի հայցերի համար պատասխանատվության սահմանափակման մասին» 1976 թվականի միջազգային կոնվենցիան իրականացնող ազգային օրենսդրությամբ, որը փոփոխվել է 1996 թվականի Արձանագրությամբ, այդ թվում՝ ապագայում դրանում կատարվելիք ցանկացած փոփոխություն:

Այդպիսի կիրառելի ազգային օրենսդրության բացակայության դեպքում փոխադրողի կամ փոխադրում իրականացնողի պատասխանատվության հարցը կարգավորվում է միայն սույն Կանոնակարգի 3-րդ հոդվածով:

2. ԾՄԿ ուղեցույցների 2.2 պարբերության մեջ նշված ռիսկերից որեւէ մեկի հետեւանքով առաջացած ուղեւորի մահվան կամ վերջինիս պատճառված անձնական վնասի գործով՝ փոխադրողը եւ փոխադրում իրականացնողը կարող են սահմանափակել իրենց պատասխանատվությունը՝ համաձայն սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված դրույթների:

## Հոդված 6

### Նախնական վճարումները

1. Եթե ուղեորի մահվան կամ նրան հասցված անձնական վնասի պատճառ է դարձել փոխադրման ընթացքում տեղի ունեցած պատահարը, փոխադրման ընթացքում տեղի ունեցած պատահարի ժամանակ փաստացի ամբողջական կամ մասնակի փոխադրում իրականացրած անձը պետք է կատարի նախնական վճարում, որի գումարի չափը, պատճառված վնասին համաչափ, պետք է բավարար լինի անհապաղ տնտեսական կարիքները հոգալու համար՝ փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձին բացահայտելուց 15 օրվա ընթացքում: Մահվան դեպքում վճարման չափը չպետք է 21000 եվրոյից պակաս լինի:

Սույն դրույթը պետք է կիրառվի նաև այն դեպքում, եթե փոխադրողն իր գործունեությունն իրականացնում է Համայնքի տարածքում:

2. Նախնական վճարումը չի համարվում պատասխանատվության ընդունում եւ կարող է հաշվանցվել սույն Կանոնակարգի հիման վրա վճարվող ցանկացած հետագա գումարների հաշվին: Գումարը չի վերադարձվում, բացառությամբ Աթենքի կոնվենցիայի 3(1) հոդվածով կամ 6-րդ հոդվածով կամ ԾՄԿ ուղեցույցներին կից Ա հավելվածով սահմանված դեպքերի, կամ եթե անձը, ով ստացել է այն, փոխհատուցում ստանալու իրավունք չունի:

## Հոդված 7

### Տեղեկատվությունն ուղեորների համար

Չսահմանափակելով տուրօպերատորների՝ «Զբոսաշրջային փաթեթների (զբոսաշրջային համալիր ծառայությունների փաթեթների) մասին» Խորհրդի 1990 թվականի հունիսի 13-ի 90/314/ԵՏՀ հրահանգով [8] սահմանված պարտավորությունները՝ փոխադրողը եւ (կամ) փոխադրում իրականացնողն ապահովում են, որ ուղեորներին տրամադրվի իրենց իրավունքների մասին համապատասխան ու համապարփակ տեղեկություններ՝ համաձայն սույն Կանոնակարգի:

Եթե փոխադրման պայմանագիրը կնքվում է անդամ պետությունում, ապա այդ տեղեկությունները տրամադրվում են վաճառքի բոլոր կետերում՝ ներառյալ հեռախոսով եւ համացանցի միջոցով վաճառքը: Եթե մեկնման վայրը անդամ պետությունում է, ապա այդ տեղեկությունները տրամադրվում են նախքան մեկնումը: Մյուս բոլոր դեպքերում այն



տրամադրվում է մեկնման պահին: Կախված այն հանգամանքից, թե սույն հոդվածով պահանջվող տեղեկությունները ինչ չափով են տրամադրվել փոխադրողի կամ փոխադրում իրականացնողի կողմից, վերջիններից մեկը կարող է պարտավորված չլինել տրամադրել այն: Տեղեկությունները տրամադրվում են ամենահարմար ձեաչափով:

Սույն հոդվածի համաձայն տեղեկատվության պահանջը բավարարելու համար փոխադրողը եւ փոխադրում իրականացնողն ուղեւորներին տրամադրում են առնվազն այն տեղեկությունները, որոնք ներառված են Հանձնաժողովի կողմից՝ սույն Կանոնակարգի դրույթների մասին նախապատրաստված ամփոփագրում եւ մատչելի են հանրությանը:

#### *Հոդված 8*

##### **Հաշվետվությունները ներկայացնելը**

Սույն Կանոնակարգի կիրառման ամսաթվից հետո ոչ ուշ, քան երեք տարի հետո Հանձնաժողովը սույն Կանոնակարգի կիրառության մասին կազմում է հաշվետվություն, որում մասնավորապես հաշվի են առնվում տնտեսական զարգացումները եւ միջազգային հարթակում տեղի ունեցող զարգացումները:

Այդ հաշվետվությանը կից կարող է սույն Կանոնակարգի փոփոխման մասին առաջարկ, կամ Համայնքի կողմից համապատասխան միջազգային հարթակում ներկայացվող առաջարկ լինել:

#### *Հոդված 9*

##### **Փոփոխությունները**

1. Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված եւ Աթենքի կոնվենցիայի 3(1) հոդվածով, 4bis(1) հոդվածով, 7(1) հոդվածով եւ 8-րդ հոդվածով սահմանված ժամկետներում կատարված փոփոխություններն ինկորպորացնելուն առնչվող միջոցները՝ նախատեսված այդ Կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն ընդունված որոշումները հաշվի առնելու համար, ինչպես նաեւ սույն Կանոնակարգին կից I հավելվածի համապատասխան թարմացումներն ընդունվում են՝ սույն Կանոնակարգի 10(2) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հաշվի առնելով պահանջված մակարդակի մատչելի ապահովագրական ծածկույթի ձեռքբերման վճարների համար հետեւանքները եւ շուկայի հնարավորությունը՝ ուղեւորների իրավունքների ամրապնդման քաղաքականության նախադրյալների եւ երթեւեկության որոշ մասերի սեզոնային բնույթի համեմատ՝ մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 31-ը համապատասխան ազդեցության գնահատման հիման վրա Հանձնաժողովն ընդունում է իրավական ակտ՝ Բ դասի նավերի համար I հավելվածով սահմանված սահմանների առնչությամբ՝ համաձայն 98/18/ԵՀ հրահանգի 4-րդ հոդվածի Այդ ակտը, որը նախատեսված է սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, ընդունվում է Կանոնակարգի 10(2) հոդվածով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

2. Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված եւ II հավելվածով սահմանված ԾՄԿ ուղեցույցների դրույթների համապատասխան փոփոխությունների ինկորպորացմանը վերաբերող ակտերն ընդունվում են 10(2) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

#### *Հոդված 10*

##### **Կոմիտեի աշխատակարգը**

1. Հանձնաժողովին աջակցում է Անվտանգ ծովերի եւ նավերից աղտոտումների կանխարգելման հարցերով կոմիտեն (ԱԾԿ), որը հիմնադրվել է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 2099/2002 կանոնակարգով (ԵՀ):
2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)–(4) եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

#### *Հոդված 11*

##### **Անցումային դրույթներ**

1. Համաձայն 98/18/ԵՀ հրահանգի 4-րդ հոդվածի՝ Ա դասի նավերով միայն մեկ անգամ պետությունում ծովային ուղեւորափոխադրումների դեպքում անգամ պետությունները կարող

են հետաձգել սույն Կանոնակարգի կիրառումը դրա կիրառման ամսաթվից հետո մինչև չորս տարի:

2. Համաձայն 98/18/ԵՀ հրահանգի 4-րդ հոդվածի՝ Ա դասի նավերով միայն մեկ անդամ պետությունում ծովային ուղեւորափոխադրումների դեպքում անդամ պետությունները կարող են հետաձգել սույն Կանոնակարգի կիրառումը մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

### *Հոդված 12*

#### **Ուժի մեջ մտնելը**

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

Այն կիրառվում է Համայնքի համար Աթենքի կոնվենցիան ուժի մեջ մտնելու ամսաթվից, իսկ ցանկացած այլ դեպքում՝ 2012 թվականի դեկտեմբերի 31-ից ոչ ուշ:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է եւ անմիջականորեն գործում է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Ստրասբուրգում, 2009 թվականի ապրիլի 23-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ Հ.-Գ. Փոթերինգ

Խորհրդի կողմից՝

Նախագահ Պ. Նեչաս

[1] ՊՏ C 318, 23.12.2006թ., էջ 195:

[2] ՊՏ C 229, 22.09.2006թ., էջ 38:

[3] Եվրոպական պառլամենտի 2007 թվականի ապրիլի 25-ի եզրակացություն (ՊՏ C 74 E, 20.03.2008թ., էջ 562), Խորհրդի 2008 թվականի հունիսի 6-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 190 E, 29.07.2008թ., էջ 17), Եվրոպական պառլամենտի 2008 թվականի սեպտեմբերի 24-ի դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չհրապարակված), Խորհրդի 2009 թվականի փետրվարի 26-ի որոշում եւ Եվրոպական պառլամենտի 2009 թվականի մարտի 11-ի օրենսդրական որոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չհրապարակված):

[4] ᄡS L 144, 15.05.1998ᄡ., ᄡᄡ 1:

[5] ᄡS L 12, 16.01.2001ᄡ., ᄡᄡ 1:

[6] ᄡS L 184, 17.07.1999ᄡ., ᄡᄡ 23:

[7] ᄡS L 208, 05.08.2002ᄡ., ᄡᄡ 1:

[8] ᄡS L 158, 23.06.1990ᄡ., ᄡᄡ 59:

[9] ᄡS L 324, 29.11.2002ᄡ., ᄡᄡ 1:

*ՀԱՎԵԼՎԱԾ 1*

**«ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՈՒՂԵՔԵՌԻ ԾՈՎԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԱԹԵՆՔԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ՝ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ  
ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

(«Ուղեւորների եւ նրանց ուղեքեռի ծովային փոխադրումների վերաբերյալ» Աթենքի 1974 թվականի կոնվենցիայի համախմբված տեքստ եւ Կոնվենցիայի 2002 թվականի արձանագրություն)

*Հոդված 1*

**Սահմանումները**

Սույն Կոնվենցիայի նպատակով՝ հետեւյալ արտահայտություններն ունեն սույնով դրանց տրված իմաստը՝

1. ա) «փոխադրող» նշանակում է անձ, ում կողմից կամ ում անունից փոխադրման պայմանագիր է կնքվել, անկախ այն հանգամանքից՝ փոխադրումը փաստացի կատարվում է այդ անձի թե փոխադրում իրականացնողի կողմից,

բ) «փոխադրում իրականացնող» նշանակում է փոխադրողից բացի, այլ անձ, լինի նա նավի սեփականատերը, վարձակալողը թե օպերատորը, ով փաստացի իրականացնում է փոխադրումն ամբողջությամբ կամ մասամբ, եւ

գ) «փոխադրող, ով փաստացի իրականացնում է փոխադրումն ամբողջությամբ կամ մասամբ» նշանակում է փոխադրում իրականացնող կամ այնքանով, որքանով փոխադրողը փաստացի իրականացնում է փոխադրումները, փոխադրող.

2. «փոխադրման պայմանագիր» նշանակում է ուղեւորների կամ ուղեքեռիների եւ նրանց ուղեքեռի ծովային փոխադրման մասին պայմանագիր՝ կնքված փոխադրողի կողմից կամ վերջինիս անունից՝ կախված հանգամանքներից.

3. «նավ» նշանակում է ծովային նավ, բացի նավակներից՝ օդային բարձիկների վրա.

4. «ուղեւոր» նշանակում է նավով փոխադրվող ցանկացած անձ՝

ա) համաձայն փոխադրման պայմանագրի, կամ

բ) ով, փոխադրողի համաձայնությամբ, ուղեկցում է որեւէ փոխադրամիջոց կամ կենդանի կենդանիներ, որոնք ներառված են սույն Կոնվենցիայով չկարգավորվող՝ ապրանքների փոխադրման մասին պայմանագրում.

5. «ուղեբեռ» նշանակում է որեւէ փոխադրման պայմանագրով փոխադրողի կողմից փոխադրվող որեւէ իր կամ փոխադրամիջոց՝ բացառությամբ՝

ա) վարձակալման պայմանագրով, ապրանքագրերով կամ ապրանքների փոխադրմանն առավելագույն վերաբերող այլ պայմանագրով փոխադրվող իրերի ու փոխադրամիջոցների,

բ) կենդանի կենդանիների.

6. «ձեռքի ծանրոց» նշանակում է ուղեբեռ, որն ուղեւորը վերցնում է իր հետ խցիկ, կամ որը գտնվում է վերջինիս տնօրինության, պահպանության կամ վերահսկողության տակ: Բացի սույն հոդվածի 8-րդ պարբերության եւ 8-րդ հոդվածի կիրառության դեպքերից՝ ձեռքի ծանրոց նշանակում է ուղեբեռ, որը տեղափոխվում է ուղեւորի փոխադրամիջոցում կամ դրա վրա.

7. «ուղեբեռի կորուստ կամ վնասում» ներառում է ուղեբեռը փոխադրած կամ ըստ պայմանավորվածության՝ փոխադրող նավի ժամանումից հետո ողջամիտ ժամկետում ուղեբեռն ուղեւորին չվերառառաքելու հետեւանքով հասցված դրամական կորուստ, սակայն չի ենթադրում աշխատանքային բնույթի վեճեր ենթադրող ուշացումներ.

8. «փոխադրումը» ներառում է հետեւյալ ժամանակահատվածները՝

ա) ուղեւորի եւ նրա ձեռքի ծանրոցի առումով՝ այն ժամանակը, որի ընթացքում ուղեւորն ու (կամ) նրա ձեռքի ծանրոցը գտնվում են նավում կամ նստեցման կամ իջեցման ընթացքում եւ այն ժամանակը, որի ընթացքում ուղեւորն ու նրա ձեռքի ծանրոցը ջրային ուղիներով տեղափոխվում են ցամաքից նավ կամ հակառակը, եթե այդպիսի տեղափոխման արժեքը ներառված է վարձավճարում կամ եթե օժանդակ միջոցներով փոխադրման նպատակով օգտագործվող նավը փոխադրողի կողմից հանձնվել է ուղեւորի տնօրինությանը: Այնուամենայնիվ, ուղեւորի առումով փոխադրումը չի ներառում այն ժամանակահատվածը, որի ընթացքում ուղեւորը գտնվում է նավամատուցում կամ նավահանգստում կամ նավակայանում, կամ ցանկացած այլ նավահանգստային կայանքում,

բ) ձեռքի ծանրոցի առումով՝ նաեւ այն ժամանակահատվածը, որի ընթացքում ուղեւորը գտնվում է նավամատուցում կամ նավահանգստում, կամ նավակայանում, կամ ցանկացած

այլ նավահանգստային կայանքում, եթե այդ ուղեբեռը վերցվել է փոխադրողի կամ նրա աշխատակցի, կամ գործակալի կողմից եւ վերաառաքվել է ուղեւորին,

գ) ձեռքի ծանրոցից բացի՝ այլ ուղեբեռի դեպքում փոխադրողի կամ նրա աշխատակցի, կամ գործակալի կողմից ուղեբեռը ցամաք կամ նավ տեղափոխելու ժամանակահատվածից մինչեւ փոխադրողի կամ նրա աշխատակցի, կամ գործակալի կողմից դրա վերաառաքման ժամանակահատվածը.

9. «միջազգային փոխադրում» նշանակում է ցանկացած փոխադրում, որի դեպքում, փոխադրման պայմանագրին համապատասխան, մեկնման վայրն ու նշանակման վայրը գտնվում են երկու տարբեր պետություններում կամ մեկ պետությունում, եթե փոխադրման պայմանագրին կամ սահմանված երթուղուն համապատասխան, մեկ այլ պետությունում կա միջանկյալ նավահանգիստ.

10. «կազմակերպություն» նշանակում է Միջազգային ծովային կազմակերպություն.

11. «Գլխավոր քարտուղար» նշանակում է Կազմակերպության գլխավոր քարտուղար:

*Հոդված 1bis*

### Հավելված

Սույն Կոնվենցիային կից հավելվածը կազմում է դրա անբաժանելի մասը:

### Հոդված 2

#### Կիրառումը

1. [...] [\*]

2. Չնայած սույն հոդվածի 1-ին պարբերությանը՝ սույն Կոնվենցիան չի կիրառվում, երբ տրանսպորտային այլ միջոցով ուղևորների կամ ուղեբեռի փոխադրման վերաբերյալ միջազգային որեւէ այլ կոնվենցիայի համաձայն՝ փոխադրման նկատմամբ կիրառվում է քաղաքացիական պատասխանատվության ռեժիմ այդպիսի կոնվենցիայի դրույթների համաձայն՝ այնքանով, որքանով այդ դրույթները պետք է պարտադիր կիրառվեն ծովային փոխադրման նկատմամբ:

### Հոդված 3

#### Փոխադրողի պատասխանատվությունը

1. Փոխադրման ընթացքում տեղի ունեցած պատահարի հետեւանքով ուղևորի մահվան կամ վերջինիս պատճառված անձնական վնասի դեպքում փոխադրողը պատասխանատվություն է կրում այնքանով, որքանով տվյալ ուղևորին առնչվող այդ վնասը յուրաքանչյուր առանձին դեպքում չի գերազանցում հաշվարկային 250000 միավորը, եթե փոխադրողն ապացուցում է, որ պատահարը՝

ա) հետեւանք է պատերազմի, ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի, պետական հեղաշրջման կամ բացառիկ, անխուսափելի ու անդիմադրելի բնույթի բնության երեւոյթի, կամ

բ) ամբողջապես հետեւանք է երրորդ կողմի գործողության կամ բացթողման, որի նպատակը եղել է պատահարի առաջացումը:

Եթե եւ այնքանով, որքանով կորստի չափը գերազանցում է վերը նշված սահմանը, փոխադրողը պետք է կրի ավելի մեծ պատասխանատվություն, եթե փոխադրողը չի



ապացուցում, որ վնասի պատճառ դարձած պատահարն առաջացել է ոչ փոխադրողի մեղավորությամբ կամ ոչ վերջինիս անփութության հետեանքով:

2. Ոչ ծովային պատահարի հետեանքով՝ ուղեւորի մահվան կամ ուղեւորին պատճառված անձնական վնասի դեպքում փոխադրողը պատասխանատվություն է կրում, եթե վնասի պատճառ դարձած պատահարն առաջացել է փոխադրողի մեղավորությամբ կամ վերջինիս անփութության հետեանքով: Մեղքի կամ անփութության ապացուցման բեռը դրվում է հայցվորի վրա:

3. Ձեռքի ծանրոցի կորստի կամ վնասման հետեանքով առաջացած վնասի դեպքում փոխադրողը պատասխանատվություն է կրում, եթե վնասի պատճառ դարձած պատահարն առաջացել է փոխադրողի մեղավորությամբ կամ վերջինիս անփութության հետեանքով: Փոխադրման ընթացքում տեղի ունեցած պատահարի հետեանքով առաջացած վնասի դեպքում ենթադրվում է, որ փոխադրողը մեղավոր կամ անփոյթ է եղել:

4. Ձեռքի ծանրոցից բացի՝ այլ ուղեբեռի կորստի կամ վնասման հետեանքով առաջացած վնասի դեպքում փոխադրողը պատասխանատվություն է կրում, եթե չի ապացուցում, որ վնասի պատճառ դարձած պատահարն առաջացել է ոչ փոխադրողի մեղավորությամբ կամ անփութությամբ:

5. Սույն Հոդվածի նպատակներով՝

ա) «փոխադրման ընթացքում տեղի ունեցած պատահար» նշանակում է նավաբեկություն, խորտակում, բախում կամ բախում առափնյա շերտին, պայթյուն կամ հրդեհ նավում կամ նավի անսարքություն.

բ) «փոխադրողի մեղավորություն կամ անփութություն» ներառում է իրենց աշխատանքի կատարման ընթացքում փոխադրողի աշխատողների մեղավորությունը կամ նրանց կողմից դրսևորված անփութությունը.

գ) «նավի անսարքություն» նշանակում է կիրառելի անվտանգության կանոնակարգերի սխալ գործողություն, դրանց չկատարում կամ անհամապատասխանություն՝ կապված նավի ցանկացած մասի կամ դրա սարքավորումների հետ, երբ դրանք կիրառվում են ուղեւորների փախուստի, տարհանման, նստեցման ու իջեցման, կամ մղման, կառավարման, անվտանգ նավարկման, կառանման, խարսխման, նավակայան կամ խարսխակայան ժամանելու կամ այնտեղից մեկնելու նպատակով, կամ ջրհեղեղից հետո վնասի հսկման նպատակով, կամ երբ կիրառվում են փրկարարական սարքերի գործարկման համար, եւ

դ) «վնաս» չի ներառում պատժելի համարվող վնասների համար կամ որպես պատիժ նախատեսվող հատուցում:

6. Համաձայն սույն հոդվածի՝ փոխադրողը պատասխանատվություն է կրում միայն փոխադրման ընթացքում տեղի ունեցած պատահարների հետեւանքով պատճառված վնասի դեպքում: Ապացուցման բեռը, որ պատահարը, որը փոխադրման ընթացքում տեղի ունեցած վնասի պատճառ է դարձել, ինչպես նաեւ վնասի չափը, ընկնում է հայցվորի վրա:

7. Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի հակասում փոխադրողի՝ որեւէ երրորդ անձի նկատմամբ ունեցած հետպահանջի իրավունքին կամ տուժողի անփութության փաստի պաշտպանությունը՝ սույն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ներքո: Սույն հոդվածի ոչ մի դրույթ չի հակասում սահմանափակումների իրավունքը՝ սույն Կոնվենցիայի 7-րդ կամ 8-րդ հոդվածների ներքո:

8. Որեւէ կողմի մեղքի կամ անփութության կանխավարկածը կամ ապացուցման բեռը որեւէ կողմի վրա դնելը չի խոչընդոտում այդ կողմի օգտին փաստերի ուսումնասիրությանը:

#### *Հոդված 4*

#### **Փոխադրում իրականացնողը**

1. Եթե փոխադրման կամ դրա մի մասի իրականացումը վերապահվում է փոխադրում իրականացնողին, ապա փոխադրողը, այնուամենայնիվ, շարունակում է պատասխանատվություն կրել փոխադրման ամբողջ գործընթացի համար՝ սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան: Բացի դրանից՝ փոխադրումն իրականացնողի նկատմամբ կիրառվում են սույն Կոնվենցիայի դրույթները, եւ նրանց վերապահված են այդ Կոնվենցիայի դրույթները՝ իրենց կողմից իրականացված փոխադրման մասի առումով:

2. Փոխադրողը, փոխադրում իրականացնողի կողմից իրականացված փոխադրման առնչությամբ, պատասխանատվություն է կրում փոխադրումն իրականացնողի, իրենց աշխատանքի ընթացքում փոխադրողի աշխատողների ու գործակալների գործողությունների ու բացթողումների համար:

3. Ցանկացած հատուկ պայմանագիր, որի համաձայն՝ փոխադրողը ստանձնում է սույն Կոնվենցիայով չսահմանված պարտավորությունները կամ հրաժարվում է սույն

Կոնվենցիայով վերապահված իրավունքներից, տարածվում է փոխադրում իրականացնողի վրա միայն վերջինիս հստակ ու գրավոր համաձայնությամբ:

4. Եթե եւ այնքանով, որքանով փոխադրողը եւ փոխադրում իրականացնողը պատասխանատվություն են կրում, ապա նրանց պատասխանատվությունը պետք է լինի համապարտ ու բաժնային:

5. Սույն հոդվածի ոչ մի դրույթ չի սահմանափակում փոխադրողի եւ փոխադրում իրականացնողի միջեւ միմյանց նկատմամբ ունեցած հետպահանջի իրավունքը:

#### *Հոդված 4bis*

#### **Պարտադիր ապահովագրությունը**

1. Երբ ուղեւորափոխադրումն իրականացվում է Կողմ պետությունում գրանցված նավով, որն ունի ավելի քան տասներկու ուղեւոր փոխադրելու թույլտվություն, եւ կիրառվում է սույն Կոնվենցիան, ցանկացած փոխադրող, ով փաստացի իրականացնում է փոխադրումն ամբողջությամբ կամ մասամբ, կատարում է ապահովագրություն կամ ֆինանսական ռիսկերի այլ ապահովագրում, ինչպես, օրինակ՝ բանկային կամ նմանատիպ ֆինանսական կազմակերպության երաշխիք, որով ծածկվում է սույն Կոնվենցիայով սահմանված վնասները՝ ուղեւորների մահվան եւ նրանց հասցված անձնական վնասի դեպքում: Պարտադիր ապահովագրության կամ ֆինանսական ռիսկերի ապահովագրության սահմանը չպետք է յուրաքանչյուր կոնկրետ պատահարի դեպքում մեկ ուղեւորի հաշվով ցածր լինի 250000 հաշվարկային միավորից:

2. Սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան՝ ապահովագրության կամ ֆինանսական ռիսկերի ապահովագրության գործողությունը հաստատող հավաստագիրը տրվում է յուրաքանչյուր նավի այն բանից հետո, երբ Կողմ պետության համապատասխան մարմինը որոշում է, որ 1-ին պարբերության պահանջները բավարարված են: Կողմ պետությունում գրանցված նավի դեպքում այդպիսի հավաստագիրը տրվում կամ հաստատվում է նավի գրանցման պետության համապատասխան մարմնի կողմից: Եթե նավը գրանցված չէ Կողմ պետությունում, ապա այն տրվում կամ հաստատվում է ցանկացած Կողմ պետության համապատասխան մարմնի կողմից: Այդ հավաստագիրը պետք է կազմված լինի սույն Կոնվենցիային կից հավելվածով սահմանված օրինակով եւ պետք է ներառի հետեւյալ տվյալները՝

ա) նավի անունը, տարբերակիչ համարը կամ տառերը եւ գրանցված նավահանգիստը,

բ) փոխադրումն ամբողջությամբ կամ մասամբ փաստացի իրականացնող փոխադրողի անունը եւ գործունեության հիմնական վայրը,

գ) նավի նույնականացման ՇՄԿ համարը,

դ) ապահովման տեսակն ու տեսողությունը,

ե) ապահովագրողի կամ ֆինանսական ռիսկերի ապահովագրություն տրամադրող այլ անձի անունը եւ գործունեության հիմնական վայրը, գործունեության վայրը, որտեղ հիմնադրվել է ապահովագրությունը կամ ֆինանսական այլ ռիսկերի ապահովագրության ընկերությունը,

զ) հավաստագրի վավերականության ժամկետը, որը չպետք է գերազանցի ապահովագրության կամ ֆինանսական ռիսկերի ապահովագրության վավերականության ժամկետը:

3. ա) Կողմ պետությունը կարող է հավաստագրի տրամադրումը լիազորել այդ պետության կողմից ճանաչված որեւէ հաստատության կամ կազմակերպության: Այդ հաստատությունը կամ կազմակերպությունը տեղեկացնում է այդ Պետությանը տրամադրված յուրաքանչյուր հավաստագրի մասին: Բոլոր դեպքերում Կողմ պետությունը լիովին երաշխավորում է նման ձեռով տրամադրված հավաստագրի ամբողջականությունն ու ճշգրտությունը եւ նախաձեռնում է անհրաժեշտ միջոցների ապահովում՝ այդ պարտականությունը կատարելու համար:

բ) Կողմ պետությունը տեղեկացնում է Գլխավոր քարտուղարին հետեւյալի մասին՝

i) մարմնի կողմից ճանաչված հաստատությանը կամ կազմակերպությանը նույն մարմնի կողմից պատվիրակված կոնկրետ պարտականություններն ու պայմանները,

ii) այդպիսի մարմնի գործունեության դադարեցումը, եւ

iii) ամսաթիվը, որից սկսած այդպիսի մարմնի գործունեությունը կամ գործունեության դադարեցումը մտնում է ուժի մեջ:

Պատվիրակված մարմինը չի գործում այդ նպատակով Գլխավոր քարտուղարին տրված ծանուցման ամսաթվից երեք ամիս առաջ:

գ) սույն պարբերությանը համապատասխան հավաստագրեր տրամադրելու համար լիազորված հաստատությունը կամ կազմակերպությունն առնվազն լիազորված է

դադարեցնել այդ հավաստագրերի գործողությունը, եթե այն պայմանները, որոնց համաձայն տրվել են հավաստագրերը, չեն բավարարվել: Հաստատությունը կամ կազմակերպությունն ամեն դեպքում զեկուցում է հավաստագրի գործողության դադարեցման մասին այն պետությանը, որի անունից հավաստագիրը տրամադրվել է:

4. Հավաստագիրը պետք է կազմված լինի տրամադրող պետության պետական լեզվով կամ լեզուներով: Եթե գործածված լեզուն անգլերենը, ֆրանսերենը կամ իսպաներենը չեն, տեքստը կարող է ներառել նաև նշված լեզուներից որեւէ մեկով թարգմանություն, իսկ եթե պետությունը նման որոշում է ընդունում, ապա պետության պետական լեզուն կարող է բաց թողնվել:

5. Հավաստագիրը պետք է պահվի նավում, իսկ պատճենը պետք է հանձնվի այն մարմիններին, որոնք վարում են նավի գրանցամատյանը կամ, եթե նավը գրանցված չէ Կողմ պետությունում, այն հանձնվում է հավաստագիրը տրամադրող կամ հաստատող պետության մարմին:

6. Ապահովագրությունը կամ ֆինանսական ռիսկերի ապահովագրության այլ միջոց չի բավարարում սույն հոդվածի պահանջները, եթե դրա գործողությունը, հավաստագրով սահմանված ապահովագրության կամ ապահովման միջոցի վավերականության ժամկետը լրանալուց բացի այլ պատճառներով, կարող է դադարել՝ նախքան 5-րդ պարբերության մեջ նշված մարմինների դադարեցման մասին ծանուցում հանձնելու ամսաթվից երեք ամիս անցնելը, եթե նշված ժամանակահատվածում հավաստագիրը չի հանձնվել այդ մարմիններ կամ չի տրամադրվել նոր հավաստագիր: Նշված դրույթները նույնպես կիրառվում են ցանկացած փոփոխության նկատմամբ, որի արդյունքում ապահովագրությունը կամ ֆինանսական ռիսկերի ապահովագրության այլ միջոցներն այլևս չեն բավարարում սույն հոդվածի դրույթները:

7. Նավի գրանցման պետությունը, համաձայն սույն հոդվածի դրույթների, որոշում է հավաստագրի տրամադրման պայմաններն ու վավերականության ժամկետը:

8. Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի մեկնաբանվում որպես միջոց, որը կարող է խոչընդոտել Կողմ պետությանը հիմնվելու սույն Կոնվենցիայի նպատակներով ապահովագրություն կամ ֆինանսական ռիսկերի ապահովագրության այլ միջոց տրամադրողների ֆինանսական վիճակի մասին այլ պետություններից կամ Կազմակերպությունից կամ այլ միջազգային կազմակերպություններից ստացված տեղեկություններին: Այդպիսի դեպքերում այդ տեղեկությունների վրա հիմնված Կողմ

պետությունը չի ազատվում իր պատասխանատվությունից՝ որպես հավաստագիր տրամադրող պետություն:

9. Կողմ պետության մարմնի կողմից տրված կամ հաստատված հավաստագրեր, սույն Կոնվենցիայի նպատակներով, ընդունվում են այլ Կողմ պետությունների կողմից եւ այլ Կողմ պետությունների կողմից համարվում են իրենց կողմից տրված կամ հաստատված հավաստագրերին հավասարազոր փաստաթուղթ, եթե նույնիսկ դրանք տրվել կամ հաստատվել են Կողմ պետությունում չգրանցված նավի կապակցությամբ: Կողմ պետությունը կարող է ցանկացած պահի պահանջել տրամադրող կամ հաստատող պետության հետ խորհրդակցության անցկացում, եթե այն կարծում է, որ ապահովագրական հավաստագրում նշված ապահովագրողը կամ երաշխավորը ֆինանսական տեսանկյունից անկարող է կատարել սույն Կոնվենցիայով սահմանված պարտավորությունները:

10. Ապահովագրության կամ ֆինանսական ռիսկերի ապահովագրության այլ միջոցով ծածկվող փոխհատուցման հայցը, համաձայն սույն հոդվածի, կարող է ներկայացվել անմիջապես ապահովագրողին կամ ֆինանսական ապահովում տրամադրող մյուս անձին: 1-ին պարբերության սահմանված գումարն այդ դեպքում կիրառվում է որպես ապահովագրողի կամ ֆինանսական ռիսկերի ապահովագրություն տրամադրող այլ անձի պատասխանատվության սահման, նույնիսկ եթե փոխադրողը կամ փոխադրում իրականացնողը չունի պատասխանատվության սահմանափակման իրավունք: Պատասխանողը կարող է հետագայում վկայակոչել պաշտպանական միջոցները (բացի սնանկությունից կամ լուծարումից), որոնք 1-ին պարբերության մեջ նշված փոխադրողն իրավունք ուներ վկայակոչելու՝ սույն Կոնվենցիային համապատասխան: Ավելին, պատասխանողը կարող է վկայակոչել այն պաշտպանական միջոցը, որի համաձայն վնասն առաջացել է ապահովագրված անձի դիտավորյալ սխալ վարքագծի հետեանքով, սակայն պատասխանողը չպետք է վկայակոչի որեւէ այլ միջոց, որը պատասխանողը պետք է իրավունք ունենար վկայակոչելու ապահովագրված անձի կողմից պատասխանողի դեմ հարուցված վարույթի ընթացքում: Պատասխանողն ամեն դեպքում իրավունք ունի պահանջելու, որ փոխադրողը եւ փոխադրում իրականացնողը մասնակցեն դատավարությանը:

11. Ապահովագրությամբ կամ ֆինանսական ռիսկերի ապահովագրությամբ տրամադրված եւ 1-ին պարբերությանը համապատասխան պահված բոլոր գումարներն օգտագործվում են բացառապես հայցերի բավարարման նպատակով՝ համաձայն սույն Կոնվենցիայի, եւ այդ

գումարից ցանկացած վճարում կատարվում է սույն Կոնվենցիայից բխող պարտավորությունների կատարման նպատակով՝ վճարված գումարների չափով:

12. Կողմ պետությունը չի թույլատրում, որ իր դրոշի ներքո նավարկող որեւէ նավ, որի նկատմամբ կիրառվում է սույն հոդվածը, որեւէ պահի գործունեություն իրականացնի առանց 2-րդ կամ 15-րդ պարբերությունների համաձայն տրամադրված հավաստագրի:

13. Սույն հոդվածի դրույթների համաձայն՝ յուրաքանչյուր Կողմ պետություն ապահովում է, որ համաձայն իր ազգային իրավունքի՝ ապահովագրությունը կամ ֆինանսական ռիսկերի ապահովագրության մեկ այլ միջոցը, 1-ին պարբերության սահմանված չափով, ուժի մեջ լինի ավելի, քան տասներկու ուղետոր փոխադրելու թույլտվություն ունեցող ցանկացած նավի առնչությամբ, որը մուտք է գործում իր տարածքում գտնվող նավահանգիստ կամ լքում է այն՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ է այն գրանցված:

14. Անկախ 5-րդ պարբերության դրույթներից՝ Կողմ պետությունը կարող է ծանուցել Գլխավոր քարտուղարին, որ, 13-րդ պարբերության նպատակներից ելնելով, չի պահանջվում, որ նավերում պահվի կամ իր տարածքում գտնվող նավահանգիստներ մուտք գործելիս կամ դրանք լքելիս ներկայացվի 2-րդ պարբերությամբ պահանջվող հավաստագիրը՝ պայմանով, որ հավաստագիրը տրամադրած Կողմ պետությունը տեղեկացրել է Գլխավոր քարտուղարին, որ վարում է բոլոր Կողմ պետությունների համար մատչելի՝ էլեկտրոնային ձեռագրավոր գրանցամատյան, ինչը հաստատում է հավաստագրի առկայությունը եւ թույլ է տալիս Կողմ պետություններին կատարել 13-րդ պարբերությամբ սահմանված իրենց պարտականությունները:

15. Եթե ապահովագրություն կամ ֆինանսական ռիսկերի ապահովագրության մեկ այլ միջոց չի կիրառվում Կողմ պետության սեփականություն հանդիսացող նավի առնչությամբ, դրան վերաբերող սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում այդ նավի նկատմամբ, սակայն նավում պետք է գտնվի նավի գրանցման պետության համապատասխան մարմինների կողմից տրված հավաստագիր, որում պետք է նշված լինի, որ նավը տվյալ պետության սեփականությունն է, եւ որ պարտավորությունը ծածկվում է 1-ին պարբերությանը համապատասխան սահմանված գումարի սահմաններում:

Նման հավաստագիրը պետք է հնարավորինս մոտ լինի 2-րդ պարբերությամբ սահմանված օրինակին:

## Հոդված 5

### **Թանկարժեք իրերը**

Փոխադրողը դրամական միջոցների, փոխանցելի արժեթղթերի, ոսկու, արծաթյա իրերի, թանկարժեք զարդերի, զարդարանքի, արվեստի գործերի եւ այլ թանկարժեք իրերի կորստի դեպքում պատասխանատվություն չի կրում, բացառությամբ, եթե այդ թանկարժեք իրերը անվտանգության նկատառումներով հանձնվել են փոխադրողին, որի դեպքում փոխադրողի պատասխանատվության չափը հասնում է 8-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ նախատեսված սահմանին, եթե ավելի բարձր սահման չի նախատեսվել՝ 10-րդ հոդվածի 1-ին պարբերությանը համապատասխան:

## Հոդված 6

### **Տուժողի մեղավորությունը**

Եթե փոխադրողն ապացուցում է, որ ուղեւորի մահվան կամ վերջինիս հասցված վնասի կամ նրա ուղեբեռի կորստի կամ վնասման պատճառը եղել է կամ դրանց առաջացմանը նպաստել է ուղեւորն իր իսկ մեղավորությամբ կամ անփութության հետեւանքով, գործը վարույթ ընդունած դատարանը կարող է ամբողջությամբ կամ մասամբ ազատել փոխադրողին պատասխանատվությունից՝ այդ դատարանում կիրառվող իրավունքի դրույթներին համապատասխան:

## Հոդված 7

### **Պատասխանատվության սահմանը մահվան եւ անձնական վնասի դեպքում**

1. Համաձայն 3-րդ հոդվածի՝ ուղեւորի մահվան կամ ուղեւորին հասցված անձնական վնասի դեպքում փոխադրողի պատասխանատվության չափը ոչ մի դեպքում չպետք է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում մեկ ուղեւորի հաշվով գերազանցի 400000 հաշվարկային միավորը: Եթե գործը վարույթ ընդունած դատարանի իրավունքով փոխհատուցումը տրվում է եկամտից պարբերական կատարվող վճարումների տեսքով, ապա այդ վճարումների համարժեք կապիտալ արժեքը չպետք է գերազանցի նշված սահմանը:
2. Կողմ պետությունը ազգային իրավունքի հատուկ դրույթներով կարող է կարգավորել 1-ին պարբերությամբ սահմանված պատասխանատվության սահմանը՝ պայմանով, որ



պատասխանատվության ազգային սահմանը (առկայության դեպքում) ավելի ցածր չէ 1-ին պարբերությամբ սահմանված շեմից:

Սույն պարբերությամբ նախատեսված այլընտրանքի իրավունքից օգտվող Կողմ պետությունը տեղեկացնում է Գլխավոր քարտուղարին պատասխանատվության ընդունված սահմանի կամ դրա բացակայության փաստի մասին:

#### *Հոդված 8*

#### **Ուղեբեռի եւ փոխադրամիջոցների կորստի կամ վնասման համար պատասխանատվության սահմանը**

1. Ձեռքի ծանրոցի կորստի կամ վնասման դեպքում փոխադրողի պատասխանատվության չափը ոչ մի դեպքում չպետք է կոնկրետ դեպքում մեկ ուղետրի հաշվով գերազանցի 2250 հաշվարկային միավորը:

2. Փոխադրամիջոցների կորստի կամ վնասման դեպքում՝ ներառյալ փոխադրամիջոցում կամ դրա վրա տեղափոխվող ամբողջ ուղեբեռը, փոխադրողի պատասխանատվության չափը ոչ մի դեպքում չպետք է կոնկրետ դեպքում մեկ փոխադրամիջոցի հաշվով գերազանցի 12700 հաշվարկային միավորը:

3. 1-ին եւ 2-րդ պարբերություններում նշվածից բացի, այլ ուղեբեռի կորստի կամ վնասման դեպքում փոխադրողի պատասխանատվության չափը ոչ մի դեպքում չպետք է կոնկրետ դեպքում մեկ ուղետրի հաշվով գերազանցի 3375 հաշվարկային միավորը:

4. Փոխադրողը եւ ուղետրը կարող են պայմանավորվել, որ փոխադրողի պատասխանատվության նկատմամբ կիրառվում է գումարի պահում, որի չափը փոխադրամիջոցի վնասման դեպքում չի գերազանցում 330 հաշվարկային միավորը, իսկ այլ ուղեբեռի կորստի կամ վնասման դեպքում՝ մեկ ուղետրի հաշվով՝ 149 հաշվարկային միավորը. այդ գումարը պետք է հանվի կորստի կամ վնասի համար սահմանված փոխհատուցման գումարից:

## Հոդված 9

### Հաշվարկային միավորը եւ փոխարկումը

1. Սույն Կոնվենցիայում նշված հաշվարկային միավորը փոխառության հատուկ իրավունքն է, ինչպես սահմանել է Արժույթի միջազգային հիմնադրամը: 3(1) հոդվածում, 4bis(1) հոդվածում, 7(1) հոդվածում եւ 8-րդ հոդվածում նշված գումարները փոխարկվում են գործը վարույթ ընդունած դատարանի պետության ազգային արժույթով՝ հիմք ընդունելով այդ արժույթի փոխարժեքը՝ վճռի օրը կամ կողմերի միջեւ պայմանավորված օրը գործող փոխառության հատուկ իրավունքի հիման վրա: Արժույթի միջազգային հիմնադրամի անդամ հանդիսացող Կողմ պետության ազգային արժույթի արժեքը, Փոխառության հատուկ իրավունքի առումով, հաշվարկվում է Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից կիրառվող արժեքի հաշվարկման մեթոդով, որը վերջինիս կողմից իրականացվող գործողությունների ու գործարքների համար գործում է տվյալ օրը: Արժույթի միջազգային հիմնադրամի անդամ չհանդիսացող Կողմ պետության ազգային արժույթի արժեքը, Փոխառության հատուկ իրավունքի առումով, հաշվարկվում է այդ Կողմ պետության կողմից որոշված եղանակով:

2. Այնուամենայնիվ, Արժույթի միջազգային հիմնադրամի անդամ չհանդիսացող պետությունը, որի իրավունքով չի թույլատրվում 1-ին պարբերության դրույթների կիրառումը, սույն Կոնվենցիան վավերացնելու, ընդունելու, հաստատելու կամ դրան միանալու ժամանակ կամ դրանից հետո ցանկացած պահի, կարող է հայտարարել, որ 1-ին պարբերության մեջ նշված հաշվարկային միավորը համարժեք է 15 ոսկե ֆրանկի: Այդ պարբերության մեջ նշված ոսկի ֆրանկը համապատասխանում է ինը հարյուր հարզի վաթսունհինգ ու կես միլիգրամ ոսկու: Ոսկե ֆրանկի փոխարկումը ազգային արժույթի կատարվում է տվյալ պետության իրավունքին համապատասխան:

3. 1-ին պարբերության վերջին նախադասության մեջ նշված հաշվարկը եւ 2-րդ պարբերության մեջ նշված փոխարկումը կատարվում է այնպիսի եղանակով, որ հնարավորության դեպքում 3(1) հոդվածում, 4bis(1) հոդվածում, 7(1) հոդվածում եւ 8-րդ հոդվածում նշված գումարները Կողմ պետությունների ազգային արժույթով արտահայտվեն նույն իրական արժեքով, ինչ 1-ին պարբերության առաջին երեք նախադասությունների կիրառության դեպքում:

Սույն Կոնվենցիայի վավերացման, ընդունման, հաստատման կամ դրան միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս եւ դրանցից որեւէ մեկում փոփոխություն կատարելու

դեպքում՝ պետությունները Գլխավոր քարտուղարին հաղորդում են 1-ին պարբերության համաձայն կատարվող հաշվարկի եղանակը կամ 2-րդ պարբերության համաձայն կատարված փոխարկման արդյունքը՝ ելնելով հանգամանքներից:

#### *Հոդված 10*

##### **Պատասխանատվության սահմանների մասին լրացուցիչ դրույթները**

1. Փոխադրողը եւ ուղետորը կարող են հստակ ու գրավոր ձեւակերպված համաձայնությամբ պայմանավորվել 7-րդ եւ 8-րդ հոդվածներով սահմանված շեմից ավելի բարձր պատասխանատվության ավելի բարձր սահմանների մասին:
2. Փոխհատուցման ու դատական ծախսերի վրա հաշվարկվող տոկոսը չի ներառվում 7-րդ եւ 8-րդ հոդվածներով սահմանված պատասխանատվության սահմաններում:

#### *Հոդված 11*

##### **Պաշտպանության միջոցներն ու սահմանները փոխադրողների աշխատողների համար**

Եթե փոխադրողի կամ փոխադրում իրականացնողի աշխատողի կամ գործակալի դեմ սույն Կոնվենցիայով կարգավորվող վնասի վերաբերյալ գործով հայց է ներկայացվում, եւ այդ աշխատողը կամ գործակալն ապացուցում է, որ գործել է իր պարտականությունների շրջանակում, ապա նա իրավունք ունի օգտվելու այն պաշտպանության միջոցներից եւ պատասխանատվության սահմաններից, որոնք փոխադրողը կամ փոխադրում իրականացնողն իրավունք ունի վկայակոչելու՝ համաձայն սույն Կոնվենցիայի:

#### *Հոդված 12*

##### **Համախմբված հայցերը**

1. Եթե գործողության մեջ դրվում են 7-րդ եւ 8-րդ հոդվածներով սահմանված պատասխանատվության սահմանները, ապա դրանք կիրառվում են յուրաքանչյուր ուղետորի մահվան կամ նրան հասցված անձնական վնասի կամ վերջինիս ուղեբեռի կորստի կամ վնասման մասին գործով հարուցված բոլոր հայցերում առկա փոխհատուցելի ընդհանուր գումարի դեպքում:

2. Փոխադրում իրականացնողի կողմից կատարված փոխադրման կապակցությամբ՝ փոխադրողի ու փոխադրում իրականացնողի, ինչպես նաև իրենց պարտականությունների շրջանակում գործող նրանց աշխատողների ու գործակալների հաշվին փոխհատուցելի ընդհանուր գումարը չի գերազանցում առավելագույն գումարը, որը կարող է դրվել փոխադրողի կամ փոխադրում իրականացնողի վրա՝ համաձայն սույն Կոնվենցիայի, սակայն նշված անձանցից ոչ մեկը պատասխանատու չէ իր համար կիրառելի սահմանը գերազանցող գումարի համար:

3. Ամեն դեպքում, եթե փոխադրողի կամ փոխադրում իրականացնողի աշխատողին կամ գործակալին սույն Կոնվենցիայի 11-րդ հոդվածով իրավունք է վերապահվում օգտվելու 7-րդ եւ 8-րդ հոդվածներով սահմանված պատասխանատվության սահմաններից, փոխադրողի կամ փոխադրում իրականացնողի հաշվին (ելնելով հանգամանքներից) փոխհատուցվող ընդհանուր գումարը չի կարող գերազանցել այդ սահմանները:

### *Հոդված 13*

#### **Պատասխանատվությունը սահմանափակելու իրավունքը կորցնելը**

1. Փոխադրողը չունի 7-րդ եւ 8-րդ հոդվածներով ու 10(1) հոդվածով սահմանված պատասխանատվության սահմանների արտոնությունից օգտվելու իրավունք, եթե ապացուցվում է, որ վնասն առաջացել է այդպիսի վնաս պատճառելու մտադրությամբ՝ փոխադրողի կողմից կատարված գործողության կամ բացթողման, կամ անփութության հետեւանքով կամ այդպիսի վնասի հավանական առաջացման մասին նրա իմացության պայմաններում:

2. Փոխադրողի կամ փոխադրում իրականացնողի աշխատողը կամ գործակալը չունի այդ սահմանների արտոնությունից օգտվելու իրավունք, եթե ապացուցվում է, որ վնասն առաջացել է այդպիսի վնաս պատճառելու մտադրությամբ՝ աշխատողի կամ գործակալի կողմից կատարված գործողության կամ բացթողման, կամ անփութության հետեւանքով, կամ այդպիսի վնասի հավանական առաջացման մասին նրա իմացության պայմաններում:

#### Հոդված 14

##### **Հայցեր ներկայացնելու հիմքը**

Փոխադրողի կամ փոխադրում իրականացնողի նկատմամբ ուղետրի մահվան կամ ուղետրին հասցված անձնական վնասի կամ ուղեբեռի կորստի կամ վնասման գործով հայց է ներկայացվում միայն սույն Կոնվենցիային համապատասխան:

#### Հոդված 15

##### **Ուղեբեռի կորստի կամ վնասման մասին ծանուցումը**

1. Ուղետրը գրավոր ծանուցում է փոխադրողին կամ նրա գործակալին՝
  - ա) ուղեբեռի ակնհայտ վնասման դեպքում.
  - ի) ձեռքի ծանրոցի մասին՝ ուղետրի ժամանումից առաջ կամ ժամանման պահին,
  - ii) մյուս ամբողջ ուղեբեռի մասին՝ դրա վերառաքումից առաջ կամ այդ պահին,
  - բ) ոչ ակնհայտ վնասի կամ ուղեբեռի կորստի դեպքում՝ ժամանման կամ վերաառաքման օրվանից կամ այն օրվանից հետո, 15 օրվա ընթացքում, երբ այդպիսի վերաառաքումը պետք է տեղի ունենար:
2. Եթե ուղետրը չի իրականացնում սույն հոդվածի դրույթները, ենթադրվում է, որ նա ուղեբեռն ստացել է անվնաս վիճակում, եթե հակառակը չի ապացուցվում:
3. Գրավոր ծանուցում կարող է չտրվել, եթե ուղեբեռը դրա ստացման պահին ենթարկվել է համատեղ ուսումնասիրության կամ ստուգման:

#### Հոդված 16

##### **Հայցերը ներկայացնելու վաղեմության ժամկետը**

1. Փոխադրողի կամ փոխադրում իրականացնողի նկատմամբ ուղետրի մահվան կամ ուղետրին հասցված անձնական վնասի կամ ուղեբեռի կորստի կամ վնասման գործով ներկայացվող հայցերի նկատմամբ երկու տարուց հետո սահմանվում է վաղեմության ժամկետ:
2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հետեւյալ կերպ՝

ա) ուղեւորին հասցված անձնական վնասի դեպքում՝ ուղեւորի ժամանման օրվանից.

բ) փոխադրման ընթացքում վրա հասած մահվան դեպքում՝ այն օրվանից, երբ ուղեւորը պետք է ժամաներ, իսկ փոխադրման ընթացքում հասցված անձնական վնասի դեպքում, որը ժամանումից հետո պատճառ է դարձել ուղեւորի մահվան՝ մահվան օրվանից՝ պայմանով, որ այդ ժամանակահատվածը չի գերազանցել երեք տարին՝ հաշված ժամանման օրվանից.

գ) ուղեբեռի կորստի կամ վնասման դեպքում՝ ժամանման օրվանից կամ այն օրվանից, երբ ժամանումը պետք է տեղի ունենար՝ հիմք ընդունելով ավելի ուշ ամսաթիվը:

3. Գործը վարույթ ընդունած դատարանի իրավունքով կարգավորվում են վաղեմության ժամկետի դադարեցման ու ընդհատման հիմքերը, սակայն, սույն Կոնվենցիայի համաձայն հայց չի ներկայացվում հետեյալ ժամկետներից որեւէ մեկը լրանալուց հետո՝

ա) ուղեւորի ժամանման օրվանից կամ այն օրվանից սկսած հինգ տարվա ընթացքում, երբ ժամանումը պետք է տեղի ունենար՝ հիմք ընդունելով ավելի ուշ ամսաթիվը, կամ եթե ավելի վաղ,

բ) երեք տարի ժամկետում՝ սկսած այն օրվանից, երբ հայցվորը գիտեր կամ պետք է ողջամտորեն իմանար պատահարի պատճառով հասցված անձնական վնասի, կորստի կամ վնասվածքի մասին

4. Անկախ սույն հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ պարբերության դրույթներից՝ վաղեմության ժամկետը կարող է երկարաձգվել փոխադրողի հայտարարությամբ կամ կողմերի համաձայնությամբ՝ հայցի հիմքի բացահայտումից հետո: Հայտարարությունը կամ համաձայնությունը պետք է գրավոր լինի:

Հոդված 17

**Իրավասու ընդդատությունը [\*\*]**

Հոդված 17bis

**Ճանաչումը եւ կատարումը**

Հոդված 18

**Պայմանագրային դրույթների անվավեր ճանաչումը**

Ցանկացած պայմանագրային դրույթ, որ կնքվել է նախքան ուղետրի մահվան կամ ուղետրի անձնական վնասի կամ ուղեբեռի կորստի, կամ վնասման պատճառ դարձած պատահարը տեղի ունենալը՝ նպատակ ունենալով մեղմացնելու սույն Կոնվենցիայի համաձայն պատասխանատվություն կրող անձի պատասխանատվությունը ուղետրի նկատմամբ կամ սահմանել սույն Կոնվենցիայով ամրագրված շեմից ավելի ցածր սահման, բացառությամբ 8-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ նախատեսված դեպքերի, ինչպես նաեւ ցանկացած այնպիսի դրույթ, որը նպատակ ունի փոփոխելու փոխադրողի կամ փոխադրում իրականացնողի վրա դրված ապացուցման բեռը, կամ որն ունի 17 -րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ պարբերություններով սահմանված այլընտրանքային իրավունքների սահմանափակման ուժ, համարվում է առոչինչ, սակայն այդ առոչինչ ճանաչված դրույթով անվավեր չի ճանաչվում փոխադրման պայմանագիրը, որի նկատմամբ շարունակվում են կիրառվել սույն Կոնվենցիայի դրույթները:

Հոդված 20

Comment [A1]: Բնօրինակում 19-րդ հոդվածը բացակայում է:

**Միջուկային վնասը**

Սույն Կոնվենցիայի համաձայն՝ պատասխանատվություն չի սահմանվում միջուկային պատահարի հետեւանքով պատճառված վնասի համար՝

ա) եթե միջուկային կայանի օպերատորը պատասխանատու է այդպիսի վնասի համար «Միջուկային էներգիայի ոլորտում երրորդ կողմի պատասխանատվության մասին» 1960 թվականի հուլիսի 29-ի Փարիզի կոնվենցիայով՝ փոփոխված դրա 1964 թվականի հունվարի

28-ի լրացուցիչ արձանագրությամբ կամ «Միջուկային վնասի համար քաղաքացիական պատասխանատվության մասին» 1963 թվականի մայիսի 21-ի Վիեննայի կոնվենցիայով կամ դրա՝ գործող ցանկացած փոփոխությամբ կամ դրան կից Արձանագրությամբ, կամ

բ) եթե միջուկային կայանի օպերատորը պատասխանատու է այդպիսի վնասի համար՝ այդպիսի վնասի համար պատասխանատվությունը կարգավորող ազգային իրավունքի ուժով՝ պայմանով, որ այդ իրավունքը բոլոր առումներով նույնքան բարենպաստ է վնաս կրած անձանց համար, որքան Փարիզի կամ Վիեննայի կոնվենցիաները կամ գործող ցանկացած փոփոխություն կամ դրան կից արձանագրություն:

#### *Հոդված 21*

##### **Առետրային նպատակներով փոխադրումը պետական մարմինների կողմից**

Սույն Կոնվենցիան կիրառվում է պետությունների կամ պետական մարմինների կողմից ձեռնարկված՝ փոխադրման պայմանագրով առետրային նպատակներով իրականացվող փոխադրումների նկատմամբ՝ 1-ին հոդվածի իմաստով:

(«Ուղեւորների եւ նրանց ուղեբեռի ծովային փոխադրումների վերաբերյալ» Աթենքի 1974 թվականի կոնվենցիային կից 2002 թվականի արձանագրության 22-րդ եւ 23-րդ հոդվածներ)

#### *Հոդված 22*

##### **Վերանայումը եւ փոփոխությունը<sup>\*\*\*</sup>**

#### *Հոդված 23*

##### **Գումարային սահմանների փոփոխություն**

1. Չհակասելով 22-րդ հոդվածի դրույթներին՝ սույն հոդվածի հատուկ ընթացակարգը կիրառվում է միայն սույն արձանագրությամբ վերանայված կոնվենցիայի 3(1), 4bis(1), 7(1) եւ 8-րդ հոդվածներով սահմանված գումարային սահմանները փոփոխելու նպատակով:

2. Սույն արձանագրության մասնակից պետությունների առնվազն կեսի (սակայն վեցից ոչ պակաս) պահանջով Գլխավոր քարտուղարը Կազմակերպության բոլոր անդամներին եւ



կողմ պետություններին պետք է ներկայացնի սույն արձանագրությամբ վերանայված կոնվենցիայի 3(1), 4bis(1), 7(1) եւ 8-րդ հոդվածներով սահմանված գումարային սահմանները, այդ թվում՝ պահվող գումարները:

3. Առաջարկված եւ ներկայացված ցանկացած փոփոխություն (ինչպես նշված է վերեւում) քննարկման համար պետք է ներկայացվի Կազմակերպության իրավական կոմիտեին (այսուհետ՝ Իրավական կոմիտե) թույլտվությունը ներկայացնելու օրվանից առնվազն վեց ամիս հետո:

4. Սույն արձանագրությամբ վերանայված Կոնվենցիայի բոլոր կողմերը (թե՛ Կազմակերպության անդամները, թե՛ մնացած կողմերը) իրավունք ունեն մասնակցելու Իրավական կոմիտեի՝ փոփոխությունների քննարկման եւ ընդունման ընթացակարգերին:

5. Փոփոխություններն ընդունվում են սույն արձանագրությամբ վերանայված Կոնվենցիայի կողմ պետությունների՝ Իրավական կոմիտեի՝ 4-րդ պարբերությամբ սահմանված քվեարկությանը մասնակցող ձայների երկու երրորդի մեծամասնությամբ՝ պայմանով, որ սույն արձանագրությամբ վերանայված Կոնվենցիայի կողմ պետությունների առնվազն կեսը մասնակցի քվեարկությանը:

6. Գումարային սահմանները փոփոխելու առաջարկության վերաբերյալ որոշում կայացնելիս Իրավական կոմիտեն պետք է հաշվի առնի միջադեպերի հետ կապված փորձը եւ, մասնավորապես, դրանց արդյունքում հասցված վնասի չափը, դրամական արժեքների փոփոխությունները եւ առաջարկված փոփոխության ազդեցությունը ապահովագրության գնի վրա:

7. ա) սույն հոդվածով սահմանված գումարային սահմանները չեն կարող փոփոխել սույն արձանագրությունը ստորագրման համար բացվելու օրվանից կամ սույն հոդվածով սահմանված նախորդ փոփոխության ուժի մեջ մտնելուց հինգ տարուց շուտ,

բ) ոչ մի գումարային սահման չի կարող ավելացվել այնքան, որ այն գերազանցի սույն արձանագրությամբ վերանայված Կոնվենցիայով սահմանված գումարային սահմանին համապատասխան գումարը, որը, սույն արձանագրությունը բացված լինելու օրվանից, յուրաքանչյուր տարի ավելացվում է բարդ տոկոսադրույքով հաշվարկվող վեց տոկոսով,

գ) ոչ մի գումարային սահման չի կարող ավելացվել այնքան, որ այն գերազանցի սույն արձանագրությամբ վերանայված Կոնվենցիայիով սահմանված գումարային սահմանը երեքով բազմապատկած գումարը:

8. Կազմակերպությունը բոլոր կողմ պետություններին ծանուցում է 5-րդ պարբերության համաձայն ընդունված ցանկացած փոփոխության մասին: Փոփոխությունը ծանուցման օրվանից 18-ամսյա ժամանակահատվածի ավարտին համարվում է ընդունված, եթե այդ ժամանակահատվածի ընթացքում փոփոխության ընդունման պահին կողմ պետություն հանդիսացող պետություններից առնվազն մեկ չորրորդը Գլխավոր քարտուղարին չի հաղորդել, թե որ դեպքում է փոփոխությունը մերժվում, եւ այն ազդեցություն չի ունենում:

9. 8-րդ պարբերության համաձայն ընդունված համարվող փոփոխությունն ուժի մեջ է մտնում ընդունման պահից 18 ամիս անց:

10. Փոփոխությունը պարտադիր է բոլոր կողմ պետությունների համար, եթե նրանք, 21-րդ հոդվածի, 1-ին եւ 2-րդ պարբերությունների համաձայն, չեղյալ չեն հայտարարում սույն արձանագրությունը փոփոխությունն ուժի մեջ մտնելուց առնվազն վեց ամիս առաջ: Արձանագրությունը չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում փոփոխությունն ուժի մեջ մտնելու պահից:

11. Եթե փոփոխությունն ընդունվել է, սակայն դրա ընդունման 18-ամսյա ժամանակահատվածը դեռ չի ավարտվել, փոփոխությունն իր ուժի մեջ մտնելու պահից պարտադիր է դառնում այն պետության համար, որն այդ ժամանակահատվածի ընթացքում դարձել է Կողմ պետություն: 8-րդ պարբերության համաձայն ընդունված փոփոխությունը պարտադիր է այն պետության համար, որը նշված ժամանակահատվածից հետո դառնում է կողմ պետություն: Սույն պարբերության մեջ նշված դեպքերում փոփոխությունը պարտադիր է դառնում պետության համար իր ուժի մեջ մտնելու պահից կամ, եթե ավելի ուշ, ապա սույն արձանագրությունը՝ այդ պետության համար ուժի մեջ մտնելու պահից:

## ԱԹԵՆՔԻ ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ՈՒՂԵՎՈՐԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՄ ՎԵՐՋԻՆԻՍ ՊԱՏՃԱՌՎԱԾ ԱՆՁՆԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ,

որը տրվում է «Ուղեւորների եւ նրանց ուղեբեռի ծովային փոխադրումների վերաբերյալ» Աթենքի 2002 թվականի կոնվենցիայի 4bis հոդվածի դրույթների համաձայն

Նավի անունը | Տարբերակիչ համարը կամ տառերը | Նավերի նույնականացման ԾՄԿ համարը | Գրանցման նավահանգիստը | Փոխադրումն իրականացնող փոխադրողի անունը եւ գործունեության հիմնական վայրի ամբողջական հասցեն |

||| |

Սա հավաստում է այն, որ վերոհիշյալ նավի առնչությամբ գործում է ապահովագրության կամ ֆինանսական ռիսկերի ապահովագրության այլ միջոցների քաղաքականություն, որը բավարարում է «Ուղեւորների եւ նրանց ուղեբեռի ծովային փոխադրումների վերաբերյալ» Աթենքի 2002 թվականի կոնվենցիայի 4bis հոդվածի պահանջները:

Ապահովագրության տեսակը...

Ապահովագրության տեսողությունը...

Ապահովագրողի (ապահովագրողների) եւ (կամ) երաշխավորողի (երաշխավորողների) անունը եւ հասցեն

Անունը...

Հասցեն...

Սույն հավաստագիրը վավեր է մինչեւ...

Տրված կամ հավաստագրված կառավարության կողմից

(Պետության ամբողջական անվանումը)

ԿԱՄ

Հետեւյալ տեքստը պետք է օգտագործվի, եթե կողմ պետությունը կիրառում է 4bis հոդվածի 3-րդ պարբերությունը.

Հավաստագիրը տրվում է ... (պետության ամբողջական անվանումը) Կառավարության վերահսկողության ներքո ... (հաստատության կամ կազմակերպության անունը) կողմից

...-ում, ...-ին

(վայրը) (ամսաթիվը)

...

(տրամադրողի կամ հավաստագրողի ստորագրությունն ու պաշտոնը)

Բացատրական ծանոթագրություններ.

1. Պետության անվանման մեջ, ցանկության դեպքում, կարող է հղում ներառվել այն երկրի իրավասու պետական մարմնին, որտեղ տրվում է հավաստագիրը:
2. Եթե ֆինանսական ռիսկերի ապահովագրության միջոցները տրամադրվում են ավելի քան մեկ աղբյուրից, ապա դրանցից յուրաքանչյուրը պետք է նշվի:
3. Եթե ֆինանսական ռիսկերի ապահովագրության միջոցները տրամադրվում են ավելի քան մեկ ձեռով, ապա դրանք պետք է թվարկվեն:
4. «Ապահովության տեսողությունը» մուտքագրումը պետք է սահմանի այն ամսաթիվը, որից սկսում է գործել ապահովագրությունը:
5. «Ապահովագրողի (ապահովագրողների) եւ (կամ) երաշխավորողի (երաշխավորողների) հասցեն» մուտքագրման մեջ պետք է նշվի ապահովագրողի (ների) եւ (կամ) երաշխավորողի (ների) գործունեության հիմնական վայրը: Հարկ եղած դեպքում նշվում է ապահովագրության կամ ապահովության այլ միջոցի ապահովման վայրը:

[\*] Բացակայում է

[\*] Բացակայում է

[\*] Բացակայում է

*ՀԱՎԵԼՎԱԾ II*

**Հատված Աթենքի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ԾՄԿ-ի վերապահումից եւ ուղեցույցներից, որոնք ընդունվել են ԾՄԿ-ի իրավական հարցերով կոմիտեի կողմից 2006 թվականի հոկտեմբերի 19-ին:**

**ԱԹԵՆՔԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾՄԿ-Ի ՎԵՐԱՊԱՀՈՒՄԸ ԵՎ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԸ**

Վերապահումը

1. Աթենքի կոնվենցիան պետք է վավերացվի հետեւյալ վերապահումով կամ նույն ուժն ունեցող հայտարարագրով.

[1.1.] որը տրամադրվում է «Ուղեւորների եւ նրանց ուղեբեռի ծովային փոխադրումների վերաբերյալ» Աթենքի 2002 թվականի կոնվենցիայի (Կոնվենցիան)....-ի կառավարության կողմից վավերացմանն առնչվող վերապահում

Փոխադրողների պատասխանատվության սահմանափակումը եւ այլն

[1.2.] ...-ի կառավարությունն իրավունք է վերապահում եւ պարտավորվում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ պարբերություններով սահմանված՝ Աթենքի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ԾՄԿ ուղեցույցների 2.2 պարբերության մեջ նշված ռիսկերից/վտանգներից որեւէ մեկի հետեւանքով առաջացած ուղեւորի մահվան կամ վերջինիս պատճառված անձնական վնասի համար պատասխանատվությունը սահմանափակել հետեւյալ գումարների ամենացածր շեմի չափով.

- 250000 հաշվարկային միավոր՝ յուրաքանչյուր ուղեւորի համար յուրաքանչյուր առանձին դեպքում,

կամ

- 340 միլիոն հաշվարկային միավոր՝ նավի համար յուրաքանչյուր առանձին դեպքում:

[1.3.] Բացի դրանից՝ ...-ի կառավարությունն իրավունք է վերապահում եւ պարտավորվում է նշված պատասխանատվության նկատմամբ կիրառել Աթենքի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ԾՄԿ ուղեցույցների 2.1.1 եւ 2.2.2 պարբերությունները՝ համապատասխան փոփոխություններով:

[1.4.] Կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ Փոխադրում իրականացնողի պատասխանատվությունը, Կոնվենցիայի 11-րդ հոդվածի համաձայն փոխադրողի կամ փոխադրում իրականացնող ծառայողների եւ միջնորդների պատասխանատվությունը եւ Կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն փոխհատուցվող ընդհանուր գումարի չափը սահմանափակվում է նույն ձեւով:

[1.5.] 1.2 պարբերության մեջ նշված վերապահումն ու պարտավորվածությունը կիրառվում են անկախ 3-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ պարբերությունների համաձայն կրած պատասխանատվության տեսակից եւ չնայած Կոնվենցիայի 4-րդ կամ 7-րդ հոդվածներում դրան առկա ցանկացած այլ շարադրանքի, սակայն նշված վերապահումն ու պարտավորվածությունը չի ազդում 10-րդ եւ 13-րդ հոդվածների (գործողության) վրա:

Պարտադիր ապահովագրություն եւ ապահովագրողների պատասխանատվության սահմանափակում

[1.6.] ...-ի կառավարությունն իրավունք է վերապահում եւ պարտավորվում է 4bis հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված՝ Աթենքի կոնվենցիայի իրականացման ԾՄԿ ուղեցույցների 2.2 պարբերությունում նշված ռիսկերից որեւէ մեկի հետեւանքով առաջացած ուղետրի մահվան կամ վերջինիս պատճառված անձնական վնասի դեպքում ապահովագրությունը կամ ֆինանսական ռիսկերի ապահովագրության այլ միջոցները պահպանելու պահանջները սահմանափակել հետեւյալ գումարների ամենացածր շեմի չափով.

- 250000 հաշվարկային միավոր՝ յուրաքանչյուր ուղետրի համար յուրաքանչյուր առանձին դեպքում,

կամ

- 340 միլիոն հաշվարկային միավոր՝ յուրաքանչյուր նավի համար յուրաքանչյուր առանձին դեպքում:

[1.7.] ...-ի կառավարությունն իրավունք է վերապահում եւ պարտավորվում է 4bis հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված՝ Աթենքի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ԾՄԿ ուղեցույցների 2.2 պարբերության մեջ նշված ռիսկերից որեւէ մեկի հետեւանքով առաջացած ուղետրի մահվան կամ վերջինիս պատճառված անձնական վնասի դեպքում ապահովագրի կամ ֆինանսական ապահովման այլ միջոցներ տրամադրող այլ անձի պարտավորությունը սահմանափակել ապահովագրության կամ ֆինանսական ռիսկերի ապահովագրության այլ

միջոցների ամենաբարձր շեմի չափով, որոնք փոխադրողը պարտավոր է պահպանել՝ նշված վերապահման 1.6 պարբերության համաձայն:

[1.8.] ...-ի կառավարությունն իրավունք է վերապահում եւ պարտավորվում է կիրառել Աթենքի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ԾՄԿ ուղեցույցները, այդ թվում՝ ուղեցույցների 2.1 եւ 2.2 պարբերություններում նշված դրույթները, սույն Կոնվենցիայով սահմանված պարտադիր ապահովագրության դեպքում:

[1.9.] ...-ի կառավարությունն իրավունք է վերապահում եւ պարտավորվում է 4bis հոդվածի 1-ին պարբերության համաձայն ապահովագրություն կամ ֆինանսական ռիսկերի ապահովագրության այլ միջոց տրամադրողին ազատել պատասխանատվությունից, որը նա դեռ չի կրում:

Հավաստագրում

[1.10.] ...-ի կառավարությունն իրավունք է վերապահում եւ պարտավորվում է տրամադրել ապահովագրության հավաստագրեր՝ Կոնվենցիայի 4bis հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝

– արտացոլելու 1.2, 1.6, 1.7 եւ 1.9 պարբերություններում նշված ապահովագրության ապահովման պատասխանատվության ու պահանջների սահմանափակումները, եւ

– ներառելու այլ սահմանափակումներ, պահանջներ եւ ազատումներ, եթե այն համարում է, որ դրանք անհրաժեշտ են՝ հավաստագրեր տրամադրելիս ապահովագրական շուկայի պահանջները բավարարելու համար:

[1.11.] ...-ի կառավարությունն իրավունք է վերապահում եւ պարտավորվում է ընդունել նմանատիպ վերապահման համաձայն այլ կողմ պետությունների կողմից տրված ապահովագրության հավաստագրերը:

[1.12.] Բոլոր սահմանափակումները, պահանջներն ու ազատումները հստակորեն արտացոլվում են Կոնվենցիայի 4bis հոդվածի 2-րդ պարբերության համաձայն տրված կամ հավաստագրված հավաստագրում:

Նշված վերապահման եւ Աթենքի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ԾՄԿ ուղեցույցների միջեւ եղած կապը

[1.13.]

Նշված վերապահմամբ պահպանված իրավունքները կիրառվում են՝ հաշվի առնելով Աթենքի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ԾՄԿ ուղեցույցները կամ դրանց ցանկացած փոփոխություն՝ միասնականություն ապահովելու նպատակով:

Եթե Միջազգային ծովային կազմակերպության իրավական կոմիտեն հաստատում/ընդունում է Աթենքի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ԾՄԿ ուղեցույցները, այդ թվում՝ գումարային սահմանները, փոփոխելու առաջարկը, ապա այդ փոփոխությունները կիրառվում են Կոմիտեի կողմից սահմանված օրվանից: Դա չի հակասում պետության՝ իր վերապահումը չեղյալ հայտարարելու կամ փոփոխելու իրավունքի մասով միջազգային իրավունքի կանոններին:

#### Ուղեցույցներ

2. Ապահովագրական շուկայի ներկա իրավիճակում կողմ պետությունները հավաստագրեր պետք է տրամադրեն պատերազմական վտանգներից եւ ոչ պատերազմական վտանգներից ապահովագրողների միջեւ համաձայնության հիման վրա: Յուրաքանչյուր ապահովագրող պետք է պատասխանատվություն կրի միայն իր մասի համար: Պետք է կիրառվեն հետեւյալ կանոնները (նշված դրույթները սահմանված են Ա Հավելվածում)։

2.1. Թե՛ պատերազմական, թե՛ ոչ պատերազմական վտանգներից ապահովագրությունը կարող է ենթարկվել հետեւյալ դրույթների.

2.1.1. Ռադիոակտիվ աղտոտման, քիմիական, կենսաբանական, կենսաքիմիական եւ էլեկտրամագնիսական զենքերի բացառման վերաբերյալ դրույթ (սահմանել թիվ 370 դրույթը),

2.1.2. Կիբերհարձակման բացառման դրույթ (սահմանել թիվ 380 դրույթը),

2.1.3. այս ուղեցույցներով փոփոխված Կոնվենցիայի համաձայն՝ պարտադիր ֆինանսական ռիսկերի ապահովագրության միջոցներ տրամադրողի պաշտպանական միջոցները եւ սահմանափակումները, մասնավորապես՝ 250000 հաշվարկային միավոր յուրաքանչյուր ուղետրի համար յուրաքանչյուր առանձին դեպքում,

2.1.4. դրույթ այն մասին, որ ապահովագրությունը տարածվում է միայն այս ուղեցույցներով փոփոխված Կոնվենցիայի համաձայն կրած պատասխանատվության վրա, եւ

2.1.5. դրույթ այն մասին, որ սույն Կոնվենցիայի համաձայն սահմանված ցանկացած գումար օգտագործվում է՝ նվազեցնելու փոխադրողի եւ (կամ) ապահովագրողի՝ Կոնվենցիայի 4bis



հողվածի համաձայն կրած պատասխանատվությունը, նույնիսկ եթե այդ գումարը չի վճարվում պատերազմական եւ ոչ պատերազմական վտանգներից ապահովագրողների կողմից:

2.2. Պատերազմական վտանգներից ապահովագրությունը ներառում է պատասխանատվություն մահվան հետեւանքով կորստի կամ անձնական վնասի համար ուղետրին հասցված՝

– պատերազմի, քաղաքացիական պատերազմի, հեղափոխության, ապստամբության, պետական հեղաշրջման կամ դրանց հետեւանքով առաջացած քաղաքացիական անկարգությունների կամ պատերազմող կողմի դեմ կամ նրա կողմից պատերազմական գործողությունների,

– բռնագրավման, առգրավման, ձերբակալման, ազատությունից զրկման կամ կալանավորման դրանց հետեւանքների կամ դրանց իրագործման ցանկացած փորձ անելու,

– դատարկ հանքերի, հրթիռների, ռումբերի կամ պատերազմի այլ մոռացված զենքերի,

– ցանկացած ահաբեկչի կամ չարամտորեն, կամ քաղաքացիական նկատառումներով գործող ցանկացած անձի գործողության կամ նման վտանգը կանխելու կամ հաշվարկելու նպատակով ձեռնարկված ցանկացած գործողության,

– բռնագրավման եւ օտարման հետեւանքով,

եւ կարող են ենթարկվել հետեւյալ ազատումների, սահմանափակումների եւ պահանջների.

2.2.1. Պատերազմի ինքնաբերական դադարեցման եւ բացառման դրույթ,

2.2.2. Եթե անհատական ուղետրոնների պահանջներն ընդհանուր առմամբ գերազանցում են 340 միլիոն հաշվարկային միավորը յուրաքանչյուր նավի համար յուրաքանչյուր առանձին դեպքում, փոխադրողը կարող է սահմանափակել իր պատասխանատվությունը 340 միլիոն հաշվարկային միավորով՝ պայմանով, որ.

– նշված գումարը բաշխվի հայցվորների միջեւ՝ իրենց պահանջներին համապատասխան,

– նշված գումարը կարող է բաշխման պահին հայտնի հայցվորների բաշխվել միանվագ կամ մի քանի փուլով, եւ

–ապահովագրողը, դատարանը կամ այլ իրավասու մարմին կարող է բաշխել նշված գումարը, որը գանձվել է ապահովագրողի կողմից այն կողմ պետության տարածքում,

որտեղ հարուցվում են այն հայցերի իրավական վարույթները, որոնք ենթադրաբար կարգավորվում են ապահովագրության կողմից,

2.2.3. 30 օր առաջ ծանուցման վերաբերյալ դրույթ՝ այն դեպքերի համար, որոնք չեն կարգավորվում 2.2.1 պարբերությամբ:

2.3. Ոչ պատերազմական վտանգներից ապահովագրությունը պետք է ներառի պարտադիր ապահովագրության ենթակա բոլոր ռիսկերը (որոնք թվարկված չեն 2.2 պարբերության մեջ) անկախ այն բանից, թե դրանք ենթակա են արդյոք 2.1 եւ 2.2 պարբերություններով սահմանված ազատումներին, սահմանափակումներին կամ պահանջներին, թե ոչ:

3. Նշված ուղեցույցներն արտացոլող ապահովագրական կազմակերպությունների (Կապույտ քարտեր) եւ ապահովագրության հավաստագրի օրինակը ներկայացված է Բ հավելման մեջ:

## ՀԱՎԵԼՎԱԾ Ա

### 2.1.1, 2.1.2 եւ 2.2.1 ուղեցույցներում նշված դրույթները

Ռադիոակտիվ աղտոտման, քիմիական, կենսաբանական, կենսաքիմիական եւ էլեկտրամագնիսական զենքերի վերաբերյալ դրույթ (370 դրույթը, 10.11.2003թ.)

Այս դրույթն առաջնային է. դրանով չեղյալ է հայտարարվում ապահովագրության մեջ ներառված՝ ցանկացած իրեն հակասող բան:

1. Այս ապահովագրությունը ոչ մի դեպքում չի ներառում պատասխանատվություն կամ ծախսեր այն կորստի կամ վնասի համար, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջացել է.

1.1. ցանկացած միջուկային վառելիքից, միջուկային թափոններից կամ միջուկային վառելիքի այրման հետեւանքով առաջացած իոնացնող ճառագայթումից կամ ռադիոակտիվությունից ստացվող աղտոտումից.

1.2. ցանկացած միջուկային տեղակայանքի, ռեակտորի կամ այլ միջուկային բլոկ, կամ դրա միջուկային բաղադրիչի ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ այլ վտանգավոր կամ աղտոտող հատկություններից.

1.3. ատոմային կամ միջուկային տրոհում եւ (կամ) սինթեզ կամ նմանատիպ այլ ռեակցիա կատարող ցանկացած զենքից, սարքից եւ/կամ ռադիոակտիվ ուժից, նյութից.

1.4. ցանկացած ռադիոակտիվ նյութի ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ այլ վտանգավոր կամ աղտոտող հատկություններից: Այս ենթադրույթի բացառումը չի տարածվում միջուկային վառելիքից բացի այլ ռադիոակտիվ իզոտոպների վրա, եթե այդ իզոտոպները պատրաստվում, տեղափոխվում, պահվում կամ օգտագործվում են առետրային, գյուղատնտեսական, բժշկական, գիտական կամ այլ նմանատիպ խաղաղ նպատակներով.

1.5. ցանկացած քիմիական, կենսաբանական, կենսաքիմիական կամ էլեկտրամագնիսական զենքից:

Սահմանել Կիբերիարձակման բացառման դրույթը (դր. 380, 10.11.2003 թ.)

1. Համաձայն ներքեւում նշված 10.2 դրույթի՝ այս ապահովագրությունը ոչ մի դեպքում չպետք է ներառի պատասխանատվություն կամ ծախսեր այն կորստի կամ վնասի համար, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջացել է համակարգչի, համակարգչային

համակարգի, համակարգչային ծրագրի, սխալ ծածկագրի, համակարգչային վիրուսի, գործողության կամ ցանկացած այլ էլեկտրոնային համակարգի օգտագործման կամ շահագործման հետեւանքով (որպես վնաս պատճառող միջոց):

2. Եթե այս դրույթը տարածվի պատերազմի, քաղաքացիական պատերազմի, հեղափոխության, ապստամբության, պետական հեղաշրջման կամ դրանց հետեւանքով առաջացած քաղաքացիական անկարգությունների կամ պատերազմող կողմի, ահաբեկչության կամ քաղաքական նկատառումներով գործող ցանկացած անձի դեմ կամ նրա կողմից պատերազմական գործողությունների գծով քաղաքականությունների վրա, ապա 10.1 դրույթը չի իրականացվի՝ բացառելու համակարգչի, համակարգչային համակարգի, համակարգչային ծրագրի կամ գործարկված ցանկացած այլ էլեկտրոնային համակարգի եւ (կամ) ցանկացած զենքի կամ հրթիռի ուղղորդման համակարգը եւ (կամ) այրման մեխանիզմը:

Պատերազմի ավտոմատ կերպով դադարեցում եւ բացառում

1.1. Ապահովագրության մեջ ներառված ռիսկերի դադարեցում

Անկախ այն բանից, թե դադարեցման վերաբերյալ նման ծանուցման կատարումն ապահովագրված է թե՛ ոչ, այն պետք է ԻՆՔՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԵՐՊՈՎ ԴԱԴԱՐԵՑՎԻ

1.1.1. պատերազմն սկսվելուն պես (անկախ այն բանից, թե պատերազմ հայտարարվել է, թե ոչ) ցանկացած հետեւյալ կողմերի միջեւ. Միացյալ Թագավորություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ֆրանսիա, Ռուսաստանի Դաշնություն, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն.

1.1.2. Օժանդակություն ստացած ցանկացած նավի համար, եթե այդ նավը բռնագրավվել է անվան կամ օգտագործման համար:

1.2. Հինգ գերտերությունների պատերազմ

Այս ապահովագրությունը ներառում է.

1.2.1. պատասխանատվություն կամ ծախսեր այն կորստի կամ վնասի համար, որն առաջացել է պատերազմն սկսվելու հետեւանքով (անկախ այն բանից, թե պատերազմ հայտարարվել է, թե ոչ) ցանկացած հետեւյալ կողմերի միջեւ. Միացյալ Թագավորություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ֆրանսիա, Ռուսաստանի Դաշնություն, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն.

1.2.2. բնագրավում անվան կամ օգտագործման համար

## ՀԱՎԵԼՎԱԾ Բ

1. 3-րդ ուղեցույցում նշված ապահովագրական ընկերությունների օրինակներ (Կապույտ քարտեր)

Կապույտ քարտ՝ տրվում է պատերազմական վտանգներից ապահովագրողի կողմից

«Ուղեւորների եւ նրանց ուղեբեռի ծովային փոխադրումների վերաբերյալ» Աթենքի 2002 թվականի կոնվենցիայի 4bis հոդվածի համաձայն՝ որպես ապահովագրության վկայական տրվող հավաստագրում ներառվում է.

Նավի անվանումը՝

Նավերի նույնականացման ԾՄԿ համարը

Գրանցման նավահանգիստը՝

Նավի սեփականատիրոջ անվանումը եւ հասցեն

Հավաստագիրը վկայում է, որ նշված նավի մասով գործում է «Ուղեւորների եւ նրանց ուղեբեռի ծովային փոխադրումների վերաբերյալ» Աթենքի 2002 թվականի կոնվենցիայի 4bis հոդվածի պահանջները բավարարող ապահովագրություն (ապահովագրության քաղաքականություն), որը ենթակա է սույն Կոնվենցիայի համաձայն պատերազմական վտանգներից պարտադիր ապահովագրությամբ սահմանված բոլոր բացառություններին ու սահմանափակումներին եւ 2006 թվականի հոկտեմբերին Միջազգային ծովային կազմակերպության իրավական կոմիտեի կողմից ընդունված իրականացման ուղեցույցներին, ներառյալ, մասնավորապես, հետեւյալ դրույթները. [Այստեղ Կոնվենցիայի տեքստը եւ ուղեցույցներն իրենց առդիրներով կարող են լրացվել ըստ ցանկության]

Ապահովագրության ժամանակահատվածը. 2007 թվականի փետրվարի 20-ից

մինչեւ 2008 թվականի փետրվարի 20-ը

Պայմանով, որ ապահովագրողը կարող է անվավեր ճանաչել այդ հավաստագիրը վերոհիշյալ մարմնին 30 օր առաջ գրավոր ծանուցելով, որ նշված ժամանակահատվածի ավարտից հետո ապահովագրողն այլեւս պատասխանատվություն չի կրում պատահարների համար:

Ամսաթիվ՝

Սույն հավաստագիրը տրվել է|«Պատերազմական վտանգներ» բաժնետիրական ընկերություն [Հասցեն] |

... Ապահովագրողի ստորագրությունը|որպես «Պատերազմական վտանգներ» բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ|

Կապույտ քարտ՝ տրվում է ոչ պատերազմական վտանգներից ապահովագրողի կողմից

«Ուղեւորների եւ նրանց ուղեբեռի ծովային փոխադրումների վերաբերյալ» Աթենքի 2002 թվականի կոնվենցիայի 4bis հոդվածի համաձայն՝ որպես ապահովագրության վկայական տրվող հավաստագրում ներառվում է.

Նավի անվանումը՝

Նավերի նույնականացման ԾՄԿ համարը

Գրանցման նավահանգիստը՝

Նավի սեփականատիրոջ անվանումը եւ հասցեն

Հավաստագիրը վկայում է, որ նշված նավի մասով գործում է «Ուղեւորների եւ նրանց ուղեբեռի ծովային փոխադրումների վերաբերյալ» Աթենքի 2002 թվականի կոնվենցիայի 4bis հոդվածի պահանջները բավարարող ապահովագրություն (ապահովագրության քաղաքականություն), որը ենթակա է, սույն Կոնվենցիայի համաձայն, ոչ պատերազմական վտանգներից ապահովագրությամբ սահմանված բոլոր բացառություններին ու սահմանափակումներին եւ 2006 թվականի հոկտեմբերին Միջազգային ծովային կազմակերպության իրավական կոմիտեի կողմից ընդունված իրականացման ուղեցույցներին, այդ թվում, մասնավորապես, հետեւյալ դրոյթներին. [Այստեղ Կոնվենցիայի տեքստը եւ ուղեցույցներն իրենց առդիրներով կարող են լրացվել ըստ ցանկության]

Ապահովագրության ժամանակահատվածը. 2007 թվականի փետրվարի 20-ից

մինչեւ 2008 թվականի փետրվարի 20-ը

Պայմանով, որ ապահովագրողը կարող է անվավեր ճանաչել այդ հավաստագիրը վերոհիշյալ մարմնին 3 ամիս առաջ գրավոր ծանուցելով, որ նշված ժամանակահատվածի ավարտից հետո, ապահովագրողն այլեւս պատասխանատվություն չի կրում պատահարների համար:

Ամսաթիվ՝

Այս հավաստագիրը տրվել է. | PANDI P&I [Հասցեն] |

... Ապահովագրողի ստորագրությունը | որպես «PANDI P&I»-ի ներկայացուցիչ|

II. 3-րդ ուղեցույցում նշված ապահովագրության հավաստագրի նմուշ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ՝ ՌԻՂԵՎՈՐԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՄ ՎԵՐՋԻՆԻՍ ՊԱՏՃԱՌՎԱԾ ԱՆՁՆԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

որը տրամադրվում է «Ուղեւորների եւ նրանց ուղեբեռի ծովային փոխադրումների վերաբերյալ» Աթենքի 2002 թվականի կոնվենցիայի 4bis հոդվածի դրույթների համաձայն

Նավի անունը | Տարբերակիչ համարը կամ տառերը | Նավերի նույնականացման ԾՄԿ համարը | Գրանցման նավահանգիստը | Փոխադրումն իրականացնող փոխադրողի անունը եւ գործունեության հիմնական վայրի ամբողջական հասցեն |

||| |

Սա հավաստում է այն, որ վերոհիշյալ նավի առնչությամբ գործում է ապահովագրության կամ ֆինանսական ռիսկերի ապահովագրության այլ միջոցների քաղաքականություն, որը բավարարում է «Ուղեւորների եւ նրանց ուղեբեռի ծովային փոխադրումների վերաբերյալ» Աթենքի 2002 թվականի կոնվենցիայի 4bis հոդվածի պահանջները:

Ապահովագրության տեսակը...

Ապահովագրության տեսողությունը...

Ապահովագրողի (ապահովագրողների) եւ (կամ) երաշխավորողի (երաշխավորողների) անունն ու հասցեն

Սույնով հավաստագրված ապահովագրությունը կիսվում է պատերազմական վտանգներից եւ ոչ պատերազմական վտանգներից ապահովագրության միջեւ՝ համաձայն 2006 թվականի հոկտեմբերին Միջազգային ծովային կազմակերպության իրավական կոմիտեի կողմից ընդունված իրականացման ուղեցույցներին: Ապահովագրողները համապարտ պատասխանատվություն չեն կրում: Ապահովագրողները

պատերազմական վտանգներից՝ «Պատերազմական վտանգներ» բաժնետիրական ընկերություն [Հասցեն] |

Ոչ պատերազմական վտանգներից՝ | PANDI P&I [Հասցեն] |



Սույն հավաստագիրը վավեր է մինչեւ...

Տրված կամ հավաստագրված կառավարության կողմից...

(Պետության ամբողջական անվանումը)

ԿԱՄ

Հետեւյալ տեքստը պետք է օգտագործվի, եթե կողմ պետությունը կիրառում է 4bis հոդվածի 3-րդ պարբերությունը.

Հավաստագիրը տրվում է (պետության ամբողջական անվանումը) Կառավարության վերահսկողության ներքո ... (հաստատության կամ կազմակերպության անունը) կողմից

...-ում, ...-ին

(վայրը) (ամսաթիվը)

...

(տրամադրողի կամ հավաստագրողի ստորագրությունն ու պաշտոնը)

Բացատրական ծանոթագրություններ.

1. Ցանկության դեպքում պետության անվանումը կարող է ներառել հղում այն երկրի իրավասու պետական մարմնին, որտեղ տրվում է հավաստագիրը:
2. Եթե ապահովության միջոցները տրամադրվում են ավելի քան մեկ աղբյուրից, ապա դրանցից յուրաքանչյուրը պետք է նշվի:
3. Եթե ֆինանսական ապահովության միջոցները տրամադրվում են ավելի, քան մեկ ձեռով, ապա դրանք պետք է թվարկվեն:
4. «Ապահովության տեսողությունը» մուտքագրումը պետք է սահմանի այն ամսաթիվը, որից սկսում է գործել ապահովությունը:
5. «Ապահովագրողի (ապահովագրողների) եւ (կամ) երաշխավորողի ( երաշխավորողների) հասցեն» մուտքագրումը պետք է նշի ապահովագրողի (ապահովագրողների) եւ (կամ) երաշխավորողի (երաշխավորողների) գործունեության հիմնական վայրը: Հարկ եղած դեպքում նշվում է ապահովագրության կամ ապահովության այլ միջոցի ապահովման վայրը: